



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ



Բ. ՊԵՂԿՈ

ՄԵԾ  
ՏՕՆ

№4

ՀՅԱ. 71  
Դ-44

1905  
Ս.-ՊԵՏԵՐԱՌՈՒԹ

~~25 NOV 2010~~

22 JUN 2007

891.7  
7-24 ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻԿԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ  
Արտադրություն առաջարկություն

Հրատ. տիկին Զաքելի

# ՄԵԾ ՏՕՆ

(Հիուսնը Ենից)

1691

正10.5  
PL-PI

Ա. ՊԵՏԵՐԲՈՒՀՈԳ

ՀԱՅՈՒԹՎԻ ՏԵՂՄԱՆ ՏՊԱՐԱՆ  
1904.

19 JUL 2013

12.8.9



У б о с о н

I

Дозволено Ценз. С. Петербургъ, 4 Октября 1904 г.



4884  
41

„Пушкинская Скоропечатня“ Лештуковъ, 4.

Կրամարեվկա զիւղը Խ... նահանգի հովտային, անտառներից զուրկ անկիւնում է ընկած: Դա մի մեծ զիւղ է, որ մի ժամանակ կալուածափրոց սեփականութիւն էր, իսկ այժմ բոլորովին աղատ է: Որ նա աղատ է այդ բանին պերճախօս վկայ են կողքի թերուած, փայտի սիւներին յենուած կիսաքանդ խրճիթներն ու գատարկ կալերը՝ որ փիփերթով ու տատասկով են ծածկուած: Այս բոլորն, անկասկած աղատութեան վկաներն են, որովհետեւ՝ ինչպէս լայսնի է՝ աղատութիւնն ու չքառութիւնը անրաժան ընկերներ են:

Ահա արդէն երեք օր է՝ ինչ կրամարեվկացիներն աղատ շունչ բաշեցին: Մութ երկինքն սկսեց պարզկա շարունակ մի քանի շաբաթ կախ ընկած ամպի մռալ կտորները, որ

անընդհատ ոռոգում էին առանց այն էլ տա-  
մուկ հողը, այժմ սկսեցին աւելի ու աւելի լեռ  
քաշուել և վերջապէս՝ կարծես արևի պայծառ  
ճառագայթներից վախեցած՝ թագնուեցին հո-  
րիզոնի լեռեր։ Շուրջը տօթ էր. մայիսեան  
արևը՝ կարծես զջացել էր՝ որ այնքան ժամա-  
նակ բացակայել էր կրամարեվկացիների դաշ-  
տերից ու մարգերից և աշխատում էր՝ աւելի  
ոյժ տալով իր կիզիչ ճառագայթներին՝ բաց  
թողած ժամանակը շահել. նա ուզում էր դաշ-  
տերը ցամաքեցնել՝ որ վերջապէս երկրադոքին  
խոտ հնձելու. միջոց տայ:

Եւ այս երեք անձրեալին շաբաթները որ-  
պիսի հիանալի խոտ հասցրին. բարձր, խիտ,  
փափուկ — կարծես ցանած լինի։ Վազուց է  
կրամարեվկացիները ալսպիսի բերք չէին տե-  
սել։ Միայն՝ թէ անձրեք չը խանդարէր, ախրը  
հեշտ բան չէ այդքան խոտը ներս առնելր։ Ի՞նչ  
կը լինի՝ թէ նորից սկսէ անձրեալին շրջանը  
և փթեցնէ գիւղացու գառն աշխատանքի  
պառուղք. — այդ արդէն անբերիութիւնից էլ  
վատ է։ Խակ կանաչ հաճարը զլուխը անփել է  
հալարտ ու բարձր, կարծես աշունքւայ եղէցն  
լինի։ Ահա հոսկերն արդէն լցում էն. այժմ  
արևի ճառագայթ է պէտք՝ որ սրանց հասցնէ։  
Միայն՝ թէ Աստուծոյ շնորհով՝ եղանակը լաւ

լինէր և փորձանքը հեռու — էլ ի՞նչ դարդ կու-  
նենար գիւղացն։ Հանար բան չէ այդ. մարդ  
վեց ասարի շարունակ միայն ցանած սերմը հա-  
զիւ կարողանալ գուրս բերել, ու չը նայելով  
գրան՝ ամէն տարի էլ նա այնքան թեթեա-  
միտ էր լինում՝ որ զաման հողին նորից էր  
փորձի հնթարկում։ Վայրենու անդթութեամբ  
նա սեփական որդոց բերնից խլում էր հացի  
վերշին հաարիկն ու հողի մէջ գցում, որ ինչ է՝  
ամբողջ գարունն այնտեղ պառկած մնայ ու  
վերջը պազի փոխարէն՝ տիրոջը նոր հիաս-  
թափութիւն բերէ։ Բայց շատերի էլ համ-  
բերութիւնը հատնում էր. շատերը նոր  
բաղրի լուսով՝ թոպնում էին անդութ հողն ու  
այբերը փուկած զնում էին առանց գիտնալու-  
թէ. ուր։ Անիծելով զաման հողը՝ շատերը  
պանդխառութեան մէջ նոռանում էին երկրա-  
պանդխառութիւնն ու կողմնակի գործի կանգնում։  
Միւսներն էլ, աննպատակ թափառելով՝  
տար, անհիւրընկալ երկրներում՝ չէին զիմա-  
նում և նորից գառնում էին հայրենի վախտ  
գաշտերը։ Գլուխուած, կիսամերկ ու հիւծու-  
ած՝ նրանք տուն էին գալիս և աննար՝ ող-  
բում էին անպէաք խոտերով ու փշով ծած-  
կուած իրանց հողաբաժնները. ի՞նչ անէին՝  
արօր չունէին, որ անդութ հողի կոշտ սիրութ

փափկացնէին, նրան նոր զոհեր բերէին: Մի ժամանակ զիւղացու համար հողը հարազատ մայր էր, իսկ ալժմ խորթ մայր զարձաւ:

Կրամարեվկացի տէրտէրի տան գաւթում անտանելի ազմուկ էր. կէս վերստ հեռաւարութիւնից կանացի մի կոպիտ, սոսկալի ծայն էր լուսում, որին հետեւում էր մի այլ ձայն, աղամարդու, թէկ աւելի կոպիտ, բայց զսպուած: Այստեղ մրցում էին տէրտէրակինն ու նրա բանոր Արտէմը: Այդ այն տէրտէրակինն էր՝ որի անունով զիւղի կանալը վախեցնում էին երեխաներին «սուս կաց, այ, թէ չէ տէրտէրակինը կը գայ քեզ սաղ-սաղ կուտէ» — սրանից յետոյ միայն երեխաները սուս էին անում: Արտէմը զիւղում աւելի պակաս էր յայտնի, բայց այնուամենայնիւ՝ յայտնի էր: Իր ամրող հասակով զարու ամբարի մօտ ցցուած՝ կանգնել էր տէրտէրակինը և այնպիսի զիւրք բռնել՝ որ կարծես հակառակորդի աչքերը փորելու էր պատրաստուել: Արիւնով լցուած աչքերն իրանց բնում կատաղաբար այս ու այն կողմն էին թռչում, նիհար, շլոտ դէմքն անչափ բարկութիւն էր արտայալում: Պարդ էր՝ որ տէրտէրակինը կատաղել էր: Այդպիսի բոպէներում նա բարկութիւնը պատկերացնելու շատ լաւ կենդանի օրինակ

կը լինէր: Քիչ հեռու, տակառի մօտ կանդնած էր Արտէմը՝ իրան մեղաւոր զգացող մարդու կլասիբական զիւրքով: Զախ ծեռքում նա բռնել էր զարով տաշտն ու իր զլխարկը, որ զլխից վերցրել էր ի պատիւ տէրտէրակինոց: Որ զլխից վերցրել էր ծոծրակին, որ պարզ կեր-Աջ ծեռքը դրել էր ծոծրակին, որ պարզ կերպով ցոյց էր տալիս նրա շփոթութիւնը:

— Խօմ ծիերն իմս չեն, ծերն են. ծեզ համար եմ նրանց այդպէս հոգում, ասում էր Արտէմը, աշխատելով՝ որ ծայնին որքան կարելիէ խաղաղ ծե տագ:

— Չեզ համար եմ այդպէս հոգում... Զեզ համար եմ այդպէս հոգում... աղաղակեց տէրտէրակինը, տղամարդի ծայնի նմանեցնելով: Պիտենք՝ թէ ինչպէս էր պահպանում տիրոջ զիտենք՝ թէ ինչպէս էր պահպանում տիրոջ զիտենքածը... Վատնում էր, ոչ թէ պահպանուեցածը... Դուք բըստոնեալ չես, անխիղն մարդ: Կարծում ես չը զիտենք՝ թէ ուր է զնում այդ զարին. կարծում ես հաւատացի՞, որ օրը երեք անգամ ծիերին ես տալիս: Իսկ մկիտանն ինչի՞ է շինած: Մկիտանին ի՞նչ պիտի վճարես, եթէ տիրոջ ապրանքը չը լինի... Զէ՞ որ կարծեմ աստանի ձատերիդ էլ հարկաւոր է կերակրել: 0'հ, գուշ ինձ նահատակեցիք, կտառարեալ նահատակեցիք: 0' Տէր-Աստուած, ինչո՞ւ ինձ այսպէս պատժեցիք, ո՞ր մեղքիս համար...:

Եւ նահատակուհին՝ առանց իր հետաքրքիր հարցի պատասխանին սպասելով՝ ամբարի դուռը ուժով վրայ զարկեց, հետն էլ մի սրտալի անէծք տալով. «անիմուիք, բոլորդ անիմուիք» ու հեռացաւ. իսկ նահատակողը մի քանի ժամանակ նոյն գրութեան մէջ կանդնած մնաց, ապա՝ յանկարծ շպրտեց տաշտն ու ամբողջ հասակով ուղղուեց, զիք կանդնեց. նա բարկացաւ, և այն էլ ինչպէս... Անդուսպ կատաղութիւնը տիրեց նրա սրտին, ու աչքերը կոյժակի պէս փայլեցին, բռունցքները բարձրացան... Օ՛, եթէ այդ բոպէին ալսաեղ լինէր աէրտէրակինը՝ լաւ օրի չէր արժանանայ.

— Դու անիմուես, գու, պառաւ վհուկ, համարեա ճչաց Արտէմը տատամնիրը՝ կըքը տայնելով: Բայց իետոյ, յանկարծ նրա ծեռքերը թուլացան և նա իրան անչափ թուլ անոյժ, խղճալի զպաց: Տէրաէրակնոց համար ի՞նչ նշանակութիւն ունի իր անէծքը: Ինքն ի՞նչ է նրա մօտ: Խզմալով ողորմութիւն արին՝ որ իրան բանւոր փարձեցին. չէ՞ որ լաւ է լիշում, թէ ինչպէս ինքն ազերսում, համարեա նրանց ուսներն էր համբուրում՝ որ զոնէ չնչին փարձով էլ է իրան ընդունեն: Սխար ինքը կամքից զուրկ մի մարդ է, սորուկ, կատա-

րեալ սորուկ: Խոնարհուիր, Արտէմ, թէ չէ վաղն և եթ քեզ զուրս կանեն և կինդ ու «սատանի ճուրլգ» առանց կառը հացի կը մնան:

Եւ Արտէմը խոնարհուեց ու կամացուկ գոմ մտաւ: Նա ընքշութեամբ շոյեց ծիերին, որմնք յատ գարձան և կարծես բարեկամաբար նրան նայեցին:

Տէրաէրակինը սենեակ մտաւ բոլորովին չարգուած: Կարելի էր կարծել՝ որ նա խսկապէս ծի զժրախոտ արարուծ էր որին ննըն Աստուած աանշանքների է դատապարտել: Նա մի նահատակի գէծք ունէր, որին անմեղ աեղը տանջում, չարչարում, վիրաւորում էն: Նրա գէծքը զժրայն էր, քունքերի վրայ զուրս էին ցցուել խիստ լարուած երակների կապոյտ թելերը, շրմունքները շղածգութեամբ ցնցում էին և կարծես ինչ-որ հավելայնքներ էին շշնչում, ցանցառ. մազերը զզզուել էին և անկարդ փնչերով չժի թաշկինակի տակից կասխ ընկել: Նա ձիշա՝ որ տանջում էր, բայց հեշտութեամբ կարելի էր հասկանալ՝ որ այդ աանշանքները չարութիւնից էին առատ գտիս: Նա մենակ է, բոլորովին մենակ, թէւ ամուսին ունի, որի հետ ասան-եհինդ աարուց աւելի է ապրել: Տէրաէրը մի երեխալ է, որի մասին պէտք է հօգ տանել և որի վրա ոչ մի բանում

չի կարելի լոյս դնել: Նա սիրում է լաւ ուտել ու քաղցր քնել — ահա այդ են նրա բոլոր արժանիքները: Այժմ էլ իր առանձնասենեակում բազմոցի վրայ պառկած, երկար մազերով, ուռած, կախ ընկած դէմքով անզորը քուն է վայելում: Տաճ ամբողջ կառաւարութիւնը տէրտէրակնոշ վրայ է ընկած: Եւ այդ այդպէս լինելուց յետոյ՝ մի՞թէ զարմանալի է որ խեղճ կինը «նահատակ» է....

II

Տէրտէրի ծիերն Արտէմը սիրում էր, կարելի է այն պատճառով՝ որ մի ժամանակ ինքն էլ ունէր զոյգ այդպիսի ծիեր: Ունէր և շատ ուրիշ բաներ. մի զոյգ էլ լաւ եղնէր, մի տասր-քսան ոչխար, կովեր, խողեր, հաւ ու ճիւ. կարում գարին ու ցորենն անպակաս, ուտելիքը համեղ, իւղալի կերակուրներ: Այդ բոլորի հետ չահիլ, գեղեցիկ կին: Արտէմի հայրն էլ բաւական կարողութիւն թողեց. «Տե՛ս, որդի, լաւ աշխատաւոր եղիր, չը ծուլանաս, հօրդ կարողութիւնը լաւ պահիր, չը խախառակես մեր ցեղը. մենք միշտ անուն ենք ունեցել»:

Արտէմը լաւ օշախի տէր էր: Նա վեց տա-

րի եռանգով աշխատեց իր հողաբաժնի վրայ, ցանեց ցորեն ու գարի... և սերմացուն հազիւհանեց: Միայն նաև չէր այդպէս, ամբողջ զաւառն էր: Եւ ամեն մի տարին իր հետ Արտէմի կարողութիւնից որևէ բան տանում էր: Առաջ ոչխարները ծախեց, յետոյ՝ հզները. միայն կովերին շատ էր ափսոսում — կաթը երեխաների համար պէտք էր պահել: Գոնէ մի կով պէտք էր չը ծախել: Բայց ահա եկաւ ցուրտ ձմեռը. կովն էլ ծախւեց: Եւ Արտէմը շուրջը նայեց ու ոչինչ չը տեսաւ. իր բոլոր կարողութիւնը հալուել էր. կինը տրտնչում և սպում էր, որդիքը հաց պահանջում:

Մի բան էր մնում. բանւոր մտնի, որ լնատանիքը պահի: Նայեց Արտէմն իր վրայ և տեսաւ որ այլ ևս առաջուանը չէ. նա, հարուստ օչախի մէջ էր մէծացել. նրա առողջ, գեղեցիկ գէմքը հաւատ ու բաւականութիւն էր արտայալատում, առողջ, չլուս ծեռքերը՝ աշխատանքի համար քոր գալիս: Դառն կարիքը, անընդհատ հոգսերն ու վեց տարուայ հիասթափութիւնն ու զրկանքը նրան դժգոյն, տիրատղէմ դարձրին. Քսաննեօթ տարեկան՝ նա ծերունու գէմք ունէր: Այդ գեռ բաւական չէր — այժմ նա ուրիշի գռանք պէտք աշխատէ....

Եւ ձմեռն ի՞նչ աշխատանք կարող էր լի-

նել. հարիւրաւոր սոված թափառաշրջիկները  
քաղաքներն ու գիւղերը ընկած՝ փոր հացի՝  
դործ են խնդրում: Զանազան գաւառներից,  
հեռաւոր նահանգներից հաւաքուած՝ նրանք  
միենոյն պատմութիւնն են ասում իրար. բո-  
լորը լու օջախի տէր նն եղել, իսկ այժմ ու-  
րախ կը լինեն՝ եթէ մի փոր հացով էլ է տեղ  
դանեն. բայց իզնւր. բանւորն այժմ գին չու-  
նի, ոչ ոքի հարկաւոր չէ, թէկուղ ձրի:

Սակայն Արտէմը մի առաւելութիւն ու-  
նի. ամենքն դիտեն, որ նա լու օջախ է  
ունեցելոր նրան կարելի է հաւատար, որովհե-  
տեւ ունեցել է սեփական կարողութիւն, տուն-  
ու տեղ և ամեն բանի արժեքը զիտէ: Կրա-  
մարեկացի տէրտէրը հեռաւոր նահանգներից  
մէկից մի բանւոր ունէր, երեք որ աշխատեց,  
երկաթէ թին ու ծիռ քէչան առաւ, փա-  
խաւ. ամենքը զիտեն, որ Արտէմը ալդ բանը  
չի անի, քանի որ նա լու անուն ունի: Ար-  
տէմը կնաց տէրտէրի մօտ: Այնուեղ նրան ճա-  
նաչում էին. մի ժամանակ նա տէրտէրի մօտ  
հիւր էլ էր զնում, թէ էր խմում և լաւ լի-  
շում է թէ ինչպէս սիրով էին ընդունում նրան:  
Ասենք՝ ալդ պատիւր առանց փոխարէնը հա-  
տուցանելու չը թողեց:

Բայց այժմ իհարկէ՝ ամեն բան փոխուել է.

թէկով չեն հիւրասիրի նրան: Այն ժամանակ  
նա «պարոն Արտէմ» էր, իսկ այժմ միայն  
«Արտէմ», առանց «պարոնի»: Տէրտէրը դուրս  
չեկաւ նրա հետ խօսելու: Տան գործերով, անտե-  
սութիւնով զբաղուելու համար նա չափից  
դուրս հաստ էր, բաւականանում էր այնքա-  
նով, որ տէրտէրակնոշ պատրաստած համեղ  
խորտիկները ճաշակում էր ու քաղցր քնում:  
Տունը երեցկինն էր կառաւարում, ուստի Սր  
տէմի հետ խօսելու էլ նա եկաւ: Արտէմին  
չը ճանաչեց և նոյնիսկ հարցրեց՝ ում տանից  
ես: Արտէմը համեստութեամբ լիշեցրեց միա-  
սին խմած թէլը: Երեցկինը լիշեց ու զարմա-  
ցաւ, որ այդպէս ընկել է, բայց մտածեց, որ  
երեկի վատնել է հօր կարողութիւնը: Արտէմը  
ոչնչ ըր պատասխանեց և գործին անցաւ. նա  
անշան վարծ էր խնդրում — տարին 60 ռուբ-  
լի. ալզբանով կը կարողանայ մի լուծ եղ զնել  
ու նորից իր տնտեսութիւնը վերականգնել:

Տէրտէրակինը ալդ վարձից սաստիկ վախե-  
ցաւ և երկիւղ յայտնեց, չլինի՞ թէ նա խելա-  
զար է: Այծմ հարիւրաւոր մարդիկ ձրի աշխա-  
տանք են որոնում, չեն գտնում, իսկ նա 60  
ո. է պահանջում. երեկի կարծում է որ ցնո-  
ւուած կնոշ հետ գործ ունի. կամ կարելի է  
արդէն ամբողչ զիւղն այն կարծիքի է՝ որ

Երեցկինը խելագարուել է, կամ դոնէ մտածումէ՝ որ տէրտէրի համար երկնքից է փող թափւում։ Արտէմը ոչ մի այդպիսի բան չէր մտածում, միայն ենթադրում էր և աշխատեց բացարել՝ որ իր և ուրիշների մէջ տարբերութիւն կայ. ինքը ունեցել է սեփական կարողութիւն և յայտնի է եղել որպէս տան լաւ կառավարիչ իսկ եկորների անցեալն անցյատ է և գուցէ կասկածելի։ Բայց այդ բացարութիւնը բաւականաչափ համոզեցուցիչ չէր։ Նրան առաջարկեցին մի քուրք և մի քանի փութ հայց եւ Արտէմը լիշում է այդ տեսարանը։

— Մալրիկ, ասում է նա ազաշական ձայնով եթէ ես մենակ լինէի, եթէ ես կին ու երեխաներ չունենացի, եթէ փոքրիկներս հաց քաղանաչին, միթէ այսօան երկար կը խօսէի։ Մի փոր հայրի համար էլ կաշխատէի։ Բայց քանի որ հայր եմ, քանի որ իմ ծեռքին նայողներ կան, հաց խնդրողներ կան...  
Եւ Արտէմն ալդ այնպիսի ձայնով էր առում, որ եթէ այստեղ երեցինոց տեղ սիրառուցող մի մարդ լինէր՝ այդ սիրառ կը ճրմլուէր ու արիւնով կը լցուէր։

— Ի՞նչ ես աղքատ Դաղարոս ձևանում, ասաց երեցկինն այնպիսի ձայնով, որ կարծես

սրտի կտոր չը կար մէջը։ Ես ի՞նչ մեղաւոր եմ՝ որ դու կին ու երեխաներ ունես. խօմ ես պարտական չե՞մ նրանց պահելու։ Եթէ կարողանամ՝ ես իմ երեխաներիս կը պահեմ։ Ինձ ի՞նչ՝ որ քոները հաց են պահանջում, կարելի է էլի շատ շատե՞րն են պահանջում հաց։ Ես խօմ ամենքին չեմ կարող կերակրել։

— Մալրիկ, ախար ես ողործութիւն չեմ խնդրում, ես ձեր տանն էլ այնպէս կաշխատեմ, ինչպէս իմ սեփական տանը, ձեր ունեցածը աչքիս լոյսի պէս կը պահպանեմ, ինչպէս իմը։

— Օհ օ, այդ արգէն աւելորդ է. խնդրեմ, իմն էլ քոնի պէս չը պահպանես։ Տեսնում եմ՝ թէ քոնն ի՞նչպէս ես պահել. երեխի իմն էլ ես ուզում այդպէս պահպանել։ Ո՞ւր է, ո՞ւր քո պահած կարողութիւնը։

Եւ երեցկինը չարախինդ միմաղ արձակեց։

— Բայց իմն Աստուած տռաւ, Աստուած վեց տարի անբերրիութիւն, երաշտ, մորեխ... Տէր Աստուած, չէ՞ որ ես երկու եղան չտփ էի աշխատում. չէ՞ որ զօնից մէջքիս ոսկորները ճաքնաքւում էին։

Արտէմն ալդ կշամբանքին չը դիմացաւ. Նա լացեց։ Ո՞վ, ո՞վ, այն էլ Արտէմը չէր պահպանում իր կարողութիւնը։ Նա՝ որ ամենա-

օրինակելի երկրագործ էր, նա՝ որ մի բոպէ անգամ անգործ չէր մնում, նա՝ որին ամենքը գովում էին և գուշակում՝ որ մեծ հարցստութիւն կը դիզէ... Բայց այդ գուշակութիւնը չ'արդարացաւ և այժմ նրան վաստնող էին անուանում... Դրանից աւելի ժանր մեղադրանք չէր կարող լինել նրա համար:

Սակայն՝ նա երկար չարտասուեց. ինչպէս եղաւ՝ որ միանգամից զլիսի չեկաւ՝ որ իր առաջ գաղան է կանգնած՝ որին անկարելի է արտասուքով գթաշարժել. Մի վայրկեանում նա փոխուեց և սկսեց նոյնպէս կոպիտ խօսել, ինչպէս երեցկինը:

— Դէհ, լաւ, թող 40 ո. լինի և հայր: Դրանից մի գրօշ անգամ պահաս չէմ տոնի: Կուզէք՝ վարձեցէք, կուզէք՝ ոչ: Մնաք բարե:

Նա կոպտութեամբ յետ գարձաւ ու դուրս գնաց: Իր մտքում վճռեց երեցկնոց մօն չը ժառանքել, եթէ իր պայմաններն ընդունէ էլ: Այլքան ստորացնելուց յետոյ՝ նոյնիսկ նրա հացն ուտելը վիրաւորական է: Եւ նա արագ՝ քայլով գնաց գէպ իր տունը:

Նրա զուխը կարծես դատարկուել էր, ոչ մի միտք, ոչ մի ծրագիր չունէր նա, կարծես մտածելու ընդունակութիւնը միանգամից կորցրէց:

Սակայն սիրտը յուսահատութիւնից կսկը-  
ծում էր: Եթէ նրա ճանապարհին մի բարձր  
ժայռ լինէր, իսկ սրա տակ խորը արագահոս  
գետ՝ առանց մի բոպէ տատանուելու կը գլո-  
րուէր այնտեղ: Այդ աւելի հեշտ էր, քան թէ  
դատարկ ծեռքով տուն գալ և սոված ընտա-  
նիքին ասել՝ որ ուտելու ոչինչ չը ճարեց:  
Այժմ նրանք գոնէ յոյս ունեն, իսկ այն ժա-  
մանակ վիշրուտած կը լինեն նրանց բոլոր յոյսերը:

Բայց ահա նրա յետեկից մարդ են ուղար-  
կել, կանչում են երեցկնոց մօտ: Սա, աւեսնելով  
Սրտէմի վճռականութիւնը, համահայնուեց  
նրա պայմաններին: Երեցկինը լաւ է հասկա-  
նում՝ որ Սրտէմը շատ ծեռնտու բանւոր է,  
որ նա մի պատահական, եկոր, անյայտ մարդ  
չէ, այլ ամբողջ գիւղին յայտնի աշխատաւոր:

Սրտէմի սկզբնական վճիռն էր՝ չը գնալ ե-  
րեցկնոց մօտ, բայց ուրիշ ելք չը կար. գնաց ու  
համաձայնուեց:

— Գիտեմ, նա իմ հոգին կը հանէ, մտա-  
ծեց նա, ստկալն համաձայնուեց:

Նատ ծանր ծմեռ էր այդ ծմեռը: Երեց-  
կինն ամեն կերպ չանք էր գնում որքան կա-  
րելի է շատ աշխատեցնի Սրտէմին, առանց  
մտածելու՝ որ յետապալի համար էլ նրա ոյ-  
ժերը հարկաւում էն. Յամենայն գէպս՝ մի տա-



բոււայ ովք Արտէմը կ'ունենար, իսկ հետեւեալ  
տարին կարելի էր մի ուրիշին վարձել, որ  
աւելի թարմ և ուժեղ է: Երեցկինը չէր սի-  
րում, որ իր ծշակները ծուլանան, ուստի և  
հնար էր գտել մի տարուայ ընթացքում  
քամել իր վարձկանի բոլոր ովքերը: Եւ ահա  
նրա սուր աչքը ամեն բոպէ հետեւում է՝ որ  
ծշակը անզործ չը մնայ: Նա ամեն ժամանակ  
կարողանում էր մի գործ նարել: Այդ կողմից  
նա անչափ ու անսահման հնարապէտ էր: Ըն-  
թացիկ գործերից գուրս, եթէ մի կես ժամ  
ազատ մնար՝ երեցկինն անպատճառ մի նոր  
գործ կը դանէր: Եթէ այս բոպէին պէտքա-  
կան գործ չը կայ՝ կը հնարէ մի բոլորովին  
անպէտը գործ, բայց իր ծշակին «ճանճ որ-  
սալու» չի թողնի — այդ արգէն նրա ան-  
խախտ սկզբունքն ու օրէնքն է: Այդպիսի գեպ-  
քում նա կստիպէ պարտէզի սառած, քար կըտ-  
րած հողը փորել: Մշակին աղախին էր դար-  
ձնում և ստիպում, որ խոհանոցը փայտ տանի,  
միս ծեծէ, խօսր հունցէ: Մի խօսրով՝ նրա  
տանը «քէֆ անել», այսինքն հանդսուանալ՝ չի  
թոյլատրուում:

Բայց այդ բոլորն Արտէմի համար ոչինչ:  
Նա լաւ գիտէր, որ երեցկնոչը մշակ մանելով՝  
գերի է գառնում, որ մի տարով ժախսում է

ինքն իրան, իր բոլոր ոլժերը՝ առանց մնա-  
ցորդի:

Մի բան միայն չէր նախատեսում, այն՝ որ  
այստեղ ամեն մի քայլափոխում կը վիրա-  
ւորեն նրա ինքնասիրութիւնը, ազատ, անկախ  
մարդու ինքնասիրութիւնը. մի մարդու, որին  
ըի՛չ առաջ ամբողջ զիւզր լարգում էր: Երեց-  
կինն իր ծշակներին իր սխերիմ թշնամին էր  
համարում. նրան թւում էր՝ որ ամեն բոպէ  
չարանենդ գտաւնաներով է շրջապատուած,  
որոնք շարունակ մտածում են՝ թէ ինչպէս  
անեն՝ որ վնաս հասցնեն աիրուհուն: Նրան  
շարունակ թւում է՝ որ Արտէմը մի-  
այն այն ժամանակ է աշխատում, երբ հետեւում  
են, մնացած ժամանակ քնում է, որ ծի-  
երի համար վերցրած զարու կէսը պահում ու  
մկիտանն է տանում, որ աղախնի հետ պայ-  
մանաւորուելով՝ գաւերով կաթը, նոյնիսկ  
տապակած միսը կտօրներով իր կնոջն է հասցը-  
նում: Բայց երեսլթին՝ նրա աչքերը այնպիսի  
սարսափելի կազմութիւն ունէին՝ որ մշակ-  
ներին տուած ամեն մի բանը ահազին չափե-  
րով մեծացնում էին, իսկ նրանց ձեռքից ան-  
ցածը՝ փոքրացնում: Եթէ Արտէմը մի չափ  
զարի էր տալիս ծիերին՝ երեցկինն իսկոյն

գնում էր անծամբ ստուգելու և անպատճառ  
սարսափահար էր լինում:

— Օհ, արդէն յաջողեցրիր. այս մի չափ  
է, հա՞, չէ՛, չէ՛, մէկ ասա՞, այս մի չափի է:  
Անտամօթ: Օրը ցերեկով գողանում ես: Ուղ-  
ղակի ինձ կողոպտում էք, կողոպտում: Շու-  
տով ամբողջ կարողութիւնս կը հալեցնէք: Եւ  
որպիսի նարպիկ գողութիւն: Արդէն կարողա-  
ցել է թաղցնել: Ուզում ես կարողութիւնդ  
նորից դրստե՞ս, հա՞: Լաւ է, լաւ, շատ լաւ մի-  
շոց ես դտել: Այդպիսով շուտով կալուածա-  
տէր կը դառնաս: Տեսնես այդ մրտեղ ես պա-  
հում գողացածդ, մէկ իմանալի՞... Այնտեղ կար-  
ծում եմ որ ամեն բանն առատ կը լինի: Կա-  
րող ես նոյն իսկ խանութ բաց անել... Թիմար,  
կարծում ես այդ բոլորը քեզ կը մնա՞յ, ի՞նչ-  
պէս չէ...»

Եւ այլ այդպիսի մեղադրանքներ թափում  
էր Արտէմի զլիխն:

Երեցինոց երևակայութիւնն ամենասնհաւա-  
տալի տեսարաններ էր պատկերացնում. —  
բանից գուրս էր դալիս, որ նրան արդէն վերշ-  
նականապէս կողոպտել են և մուրացիկ գար-  
ծրել, որ նա, արդէն աղքատ՝ տուրպակն ու-  
սին՝ խրճթից խրճիթ է շրջում ու ողորմու-  
թիւն հաւաքում: Իսկ միւս կողմից իբր թէ

Արտէմն իր ընտանիքով աւելի ու աւելի ա-  
ռաջ է գնում, նրա կարողութիւնն օրէցօր  
աւելանում է, կինը չաղանում է — ահա այդ  
խողի պէս, որ աղբն է քրքրում, երեխերը խո-  
ղի ճուտերից էլ չաղ են և հազիւ են տեղերիցը  
շարժուում, մի խօսքով՝ Արտէմն ամենայն յաջո-  
զութեամբ իրականացնում էր իրա, երեցինուց  
կենսական իդէալը:

Երեցինը ոչ մի առիթ բաց չէր թողնում,  
որ այդպիսի պատկերներ չը նկարագրէ: Եւ  
ամենից շատ մեղադրանքներ Արտէմի գլխին  
էին թափում, որովհետեւ նրա ընտանիքը նոյն  
զիւղումն էր, հետեւապէս զողանալը հեշտ էր:

Երեցինը բոլորովին չէր սիրում՝ երբ իրան  
հականառում էին: Նա շատ էր հաւանում՝ երբ  
իր հայնոյանքները լուսութեամբ և նոյն իսկ մի  
տեսակ երախտազիտութեամբ էին տանում:  
Չմեռը նա իր բանւորներին «Աստոյ զրկա-  
ծով» էր կերակրում, ալսինքն, ինչը որ ամե-  
նից էժան էր կամ ծրի: Մի դէպք եղաւ՝ երբ  
աշխատաւորները բողոքեցին և տաք կերակուր  
պահանջեցին, իսկ Արտէմն աւելացրեց, որ վատ  
չէր լինել նաև մի բաժակ արագ խմելը: Այդ-  
տեղ պէտք էր տեսնել երեցինոց «օրինաւոր»  
բարկութիւնը:

— Վա՞տ եմ կերակրել, ես վա՞տ եմ կե-

բակրում: Իսկ ձեր տանն ի՞նչ էլք ուտում, հա՞,  
խմո՞ր, աւագախառն զարի չէ՞ք լափում. հո-  
տած ձկան համար հողի չէ՞ք տալիս, այս-  
տեղ արդեն չաղացել էք, իհարկէ աւելի լաւ  
բաներ կուզեք: Դուրս կորէք ամենքդ էլ թէ  
չէք հաւանում: Աղաչանք չեմ ամի: Ոհա Մար-  
կոսը զահլաս է տանում՝ թէ ինձ վարձեցէք,  
Կիրակոսը երկու շաբաթ է գուանս վեր է ըն-  
կած: Ո՞րին թուեմ, ո՞րին լիշեմ: Կարծում էք  
վախեցալ: Թէկուզ այս ըոսպէիս բոլորդ կորէք.  
Դնացէք, գնացէք ողորմութին հաւաքեցէք,  
կարեի է ի սէր Քրիստոսի մի բան տան: Աղ-  
քատների գիւղ հիմնեցէք: Հը, ի՞նչ է, լոեցի՞ք,  
հանգստացա՞ր: Օհօ՛, դուք պատիւ հասկացնդ  
էք: Զեր արժէքն էլ չէք հասկանում: Զեր ար-  
ժէքը մի գրօշ է: Թքած ձեր բոլորի վրայ, ալ  
թէ ինչի էք արժանի...

Երեցկինը այդ տեսակի աւելի խիստ ցան-  
կութիւններ յայանեց և բանւորները լոեցին  
պապանծուեցին: Ամենքն էլ մտածեցին, որ իս-  
կապէս երեցկինը համար ոչինչ չարժէ բոլորին  
էլ խկոյն և եթ դուրս գցելը առանց կոպէկ  
վճարելու. միայն երբ սա դուրս գնաց խո-  
հանոցից՝ ամենը միարեան գոչեցին.

— Անիծուես, հազար անգամ անիծուես,

անպիտան վհուկ, ոչ այս, ոչ էլ այն աշ-  
խարհում հանգստութիւն ունենաս:

Ազգպիսի արամաղրութեան մէջ էր Կրա-  
մարեվիայի տէրտէրի տունը՝ որ գարունը վրայ  
հասաւ:

### III

— Հէյ, Մարթա, առաւօտ վաղ վեր կաց,  
Ժամը երկուսին, մինչեւ չորսը պառկելով կող-  
քերդ ցաւեցրիր. էգուց Արտէմի հետ գնա  
փողիւելու:

Այդ խօսքերն ասաց երեցկինը Մարթային  
երբ սա պառկելու էր պատրաստւում: Ժամը  
երեկոյին 11-ն էր, զիւղի համար շատ ուշ:  
Մարթան նոր վերջացրեց աման լուանալը.  
կերակրեց մի զոյտ սենեակի շներին, որոնք  
երեցկնոչը մեծ միիթարանը էին պատճա-  
ռում, և յոդնամութիւնից ոտքերի վրայ հազիւ  
էր կտնդնում: Աւզիղ տամա՞ նա արդէն քնած  
էր, որովհեաւ բոլոր զգացմունքները բթա-  
ցել էին և աչքերը փակուել: Բայց երեցկնոչ  
կարգարութիւնը նրան սթափեցրեց: Նա լայն  
բաց արեց աչքերն և զարմանքով յառեց երեց-  
կնոչը: Նա մտածում էր, որ ծառալութեան  
է մտել որպէս աղախին, տան գործեր կատա-

բելու. այժմ ինչու պէտք է դաշտալին աշխատանքի զնայ: Թէև ինքը ոչինչ չսասաց դրա մասին, բայց խորագէտ երեցկինը ամենայն սրբութեամբ գուշակեց նրա մտքերը:

— Ի՞նչ ես քոռ բուփ պէս աչքերդ չոռւմ: ԶԵ՞ս ուղում, հա՞... Փափուկ անկողնի վրայ վեր ընկնելու սովոր ես, փոցիր ծանր է, հա՞: Ես աղախին եմ, դաշտալին աշխատանքի չէմ զնայ, ա՞յդ ես ասում, չէ՞: Ապա մի զնալ՝ կը տեսնենք: Լսում ես, առաւօտ վաղ. տես, այնաեղ չը քնէք. ես ձեզ շատ լաւ եմ հանաչում, շարունակ ընելու մասին էք մտածում, հէնց այն է՝ մտնէք սալիք տակ ու խոմիացնէք:

Մարթան առանց մի խօսք պատասխանելու վեր ընկաւ կեղտուա անկողին ու քնեց:

Հետեւալ օրը զեռ լոյսը չը ծագած աէրտէրի հայեաթից դուրս եկաւ զոյտ ձի լժած սալլը, որի վրայ նստած էին Արտէմն ու Մարթան, կողքերին դրած էր զերանդին և փոցիր: Արտէմը սովոր էր զիշերանց վեր կենալուն, բայց Մարթան՝ անսովոր լինելով՝ հազիւ. էր նստել, կողքից կողք էր ընկնում, աչքերը փակւում էին: Գիշերուայ ժամը 2-ն էր:

Փչում էր վազորդեան, զով քամին շուրջը խոնաւութիւն սփուկով: Աքաղաղները կանչում էին: Գիշացիքիք նոր էին զարթնում:

— Այս ում սալին է այսպէս վաղ դաշտը զնում, աչքերը արորելով հարցնում էր գիւղացին:

— Ո՞ւմը պէտքէ լինի, տէրտէրինը, պատասխանեց կինը:

— Լաւ ժիր աշխատաւորներ են տէրտէրի բանւորները, նկատեց զիւղացին:

Գիւղն անցան, զուրս եկան դաշտը: Ահա յըրւում է գիշերուայ մութը, աստղերը խաւարում են և գուրս է գալիս արշալոյսը: Լոյսը սփուռում է դաշտերում: Վաղորդեան զէփիւռը քնքշութեամբ շոյտում է կանաչ խոտը: Արտէմը շուրջը նայեց և կարծես սթափուեց: Վաղուց է նա այսպիսի գեղեցիկ ու յուսալի պատկեր չէր տեսել: Կանաչ խիտ խոտը առատ քաղ էր խոստանում, որի նմանը կրամարելիս կացիները վաղուց չէին տեսել: Արտէրը ծանրաբեռնուել էին ամեն տեսակ հացաբոլսերով: «Տէր, մորեիսից, կարկաից ու այլ փորձանըներից ազատ պահես, մարդոց մեծ տօն կը լինի, երկրագործի սիրալ կը խնդայ»— շնչում էր Արտէմն ու բարեպաշտութեամբ երեսը խաչակնքում: Արտէմի սրտին մեծ ուրախութիւն էր տիրել: Վալրկենապէս նրա ճակատի կը ճիռները բացուեցին, որ այնպէս յամառութեամբ իրար կողքի դիզել էր վեց աարուայ

աւ կարիքը, խիստ հայեացըը պարզուեց... բայց  
քիչ յետով յանկարծ նրա սիրալ կրծեց ան-  
յուսալի կակիծը, այնպիսի ժանր մաքեր եկան  
դղուխը՝ որ ակամայ կախ զցեց ալլ զլուխն  
ու հրաշալի պատկերով հիանալուց գագարեց:  
Նա լիշեց՝ որ ալլ մէծ տօնին ինքը մասնա-  
կից չի կարող լինել, որ միայն կողմնակի հան-  
գիսատես պէտքէ լինի, միայն պէտքէ նայէ,  
թէ ինչպէս ևս բաղդաւորւում ուրիշները:

Նա իրար փրայ ամբողջ հինգ տարի ցա-  
նեց—իր ամբողջ կարողութիւնը լցրեց հողի  
մէջ այն յուսով, որ պառող կսանայ — վե-  
ցերորդ տարին ալլբատութեան հասաւ, թողեց  
հողը, որովհետեւ մի հացահատիկ անդամ չը  
մնաց: Եւ ահա հէնց ալլ, իր համար գժբախտ  
տարին Աստուած մարդոց այսպիսի շնորհ տ-  
րեց: Բարկացաւ նա, խիստ նեղացաւ: Նա-  
խանձր, նախանձր... նախանձն տսում են մեղք  
է. բայց ի՞նչպէս չը նախանձես քանի որ Աս-  
տուած անարդարութեամբ զրկեց նրան:

Լաւ էր բուսել տէրտէրի խոտը: Որքան իիտ,  
որքան թարմ ու փափուկ է, մարդու քէֆն է  
փալիս, երբ նայում է, հապա ի՞նչ կը լինի՝  
եթէ սուր զերանդիդ սլլացնելով վէր թափես  
ալլ փարթամ բոյսերը: Ահա արդէն արել  
բարձրացաւ, արտուաները երեացին: Արտէմին

ակամայ էր քաղում. նրա հետքից Մարթան  
զանդաղութեամբ քաշում էր փողիս:

Տէրտէրի մարդին կից էր կալուածատի-  
րոջ հողը, որ աասնեակ հազարաւոր վերսաեր  
շուրջն էր տարածւում: Արտէմի կողքին բան-  
ւորների մի տմբողչ խումբ քաղում էր կալուա-  
ծատիրոջ խոտը: Դրանք բոլորն ալրուած  
գէմքերով, ծզօտի ինքնազործ զլիսարկներով,  
կեղտու շապիկներով ու գոյնզղոյն լայն շալ-  
ւարներով գիւղացիներ էին: Կանալը ու աղ-  
ջերը նոյնալէս գունաւոր զգեստներ հագած,  
զլուխները թաշկինակով կապած էին: Արտէմի  
ականչ գրեց նրանց ծայնին:

— Պալտաւցիներ են, վճռեց նա և փործ  
արեց նրանցից ամենամօտիկի հետ խօսակ-  
ցութիւն սկսեր:

— Ո՞րտեղացի էք, բարեկամ, հարցրեց նա  
գերանդին շարժելով:

— Բոլորս պալտաւցիներ ենք, դանդաղու-  
թեամբ պատասխանեց լայն թիկունքաւոր,  
բաւական չահել քաղւորը:

— Ո՞րքանով էք մաել:

— Հը, որքանով. ձրի, այնպէս, համարեա-  
թէ ձրի, միւնոյն է՝ թէ ձրի, որտամտած պա-  
տասխանեց երիտասարպը:

— Ո՞նց թէ ձրի...

— Այնպէս: Պալտաւալից քառասուն հոգով եկանք: Համարեա երկու շաբաթ ճամբին էինք. մինչև այստեղ հասանք՝ բէզարեցինք, չարդուեցինք, բոլոր փողերս ժախսեցինք: Զեր երկիրն էլ լաւ երկիր էն, մարդիկ բոլորը կարծես ինչ-որ օտարներ են: Օտարութեան մէջ կամ մութ անտառում լինելը միենյն է: Դէ՛հ, այդ ժամանակ մի մարդ պատահեց, թէ ասում է եկէք ես ձեզ կը վարձեմ մինչև աշնան վերջը, աղամարդոցը 100 ռ., կնիկմարդոցը 60ռ.: Մեղանից միքանիսը այս կողմերն առաջ բանել էին, ասացին՝ որ այն ժամանակ 90-95 ռ. հազիւ էին տալիս. այդ լսելով մենք էլ համածայնուեցինք: Իսկ այժմ բանից դուրս է դալիս, որ ծրի ենք մտել: Որքան առատ են, թէ խոտը, թէ հացը: Դեռ հիմա մանէթուկէս են տալիս բանուրին, իսկ հացը հասսած ժամանակ օրավարձը երկուս ու կէս, երեք կը դառնայ: Այս ըստէիս կնիկմարդոցը մի մանէթ են տալիս...

— Գիտողներն այդպէս խորհուրդ տուին, վրայ բերեց միւս պալտաւցին, որ մռալլ ու չար տեսք ունէր:

— Հէ՛յ, հէ՛յ, փայտէ պլուխներ, անտաշ գեղցիներ, հէ՛յ, ականջ լրէք, լանկարծ լսուեց մի բաց, զիլ ծայն:

Ամենքը ականջները սրած՝ երեսն այն կողմը դարձրին: Խօսողը բարձրահասակ, կանոնաւոր կազմուածքով, զիլ դէմքով, շէկ մօրուքով մի զիւղացի էր: Նրա հայեացքը շիտակ, պարզ ու բաց էր: Խօսում էր կէս ծաղրով, բայց և բարեհամբոյր, սահուն, առանց կակազելու:

Ասում եմ, լսեցէք ինձ: Ի՞նչ էք մեղքն իրար վրայ գցում: Խօսմ նրանք էլ չը զիտէին. աշխարհում ով է ինքն իր վատը կամենում: Տեսէք, մարդիկ իրանք էլ մեզ հետ 100 մանէթով են աշխատում: Այդ էլ զիխներդ մըտցրէք, ապա խօսեցէք: Դէ՛ լսեցէք, ականջ դրէք, ի՞նչ եմ ասում:

Օհօ, տեսնում ես եարօսլաւցի այժին. քեզ ով գեներալ նշանակեց. բարի ժաղրով խօսեցին պալտաւցիները, սակայն գերանդիները կանգնեցրին ու պատրաստուեցին «եարօսլաւցի այժին» լսելու:

— Դէ՛, գէ՛, տեսնենք ի՞նչ պիտի ասես, խելքի մօտիկ բան է թէ չէ. խօսեցին ուրիշները:

— Դէ՛հ, լսեցէք, համարձակութեամբ շարունակեց եարօսլաւցին: Դէ՛հ, ասուցէք, անտաշ խախօներ, այժմ ով է ուժ հարկաւոր, կալուածատէ՛րը մեզ, թէ մէնք կալուածատէրին, հը, ասուցէք տեսնեմ:

«Ալտաւացիները լուրջ դէմք ընդունած լոեցին:

— Պարզ է, որ մենք նրան աւելի ենք հարկաւոր, առանց պատասխանի սպասելու շարունակեց եարօսլաւցին, որովհետեւ, տեսնում էք ի՞նչ տաք ժամանակ է. կալուածատիրոջ համար ամեն մի օրը ուկի է, ամեն մի օր հազար մանէթ արժէ, ուրեմն նա մեր արժէքը լաւ կիմանալ:

— Դրուստ է, հաստատուն ձայնով պատասխանեցին պալտաւցիները:

— Լաւ, շատ լաւ, ասենք որ գրուստ է: Ուրեմն, մենք որ ուզենանք՝ նրան մեր ձեռքում կը պահենք և ո՞նց որ ուզենանք այնպէս կանենք:

— Էդ էլ է դրուստ, նորից համածայնուեցին պալտաւցիները:

— Էս էլ է դրուստ, տնաղ արեց ժիր եարօսլաւցին: Լաւ, որ էս էլ է դրուստ, իսկ յետո՞յ ինչ, ապա ասացէք:

Եարօսլաւցին արգէն յայտնի կերպով ոկուեց պարծենալ իր մտաւոր առաւելութեամբ: Ալդ բարկացրեց պալտաւցիներից մէկին:

— Կաց, կաց, իծի մօրուք, բարկացած ընդմիշեց նա ճառախօսին: Կարծում ես մենք չե՞նք հասկանում ասելիքդ, բայս խիզդդ ո՞րտեղ է. կամ գուցէ խի՞զնդ էլ ալծի է, համ ...

— Համ-համ-համ, լսուեց եարօսլաւցու սուր,

բայց ծիծաղը: Ալ թէ բան ասիր, լաւ խելքիդ գու տուիր, ի՞նչ առեմ, խախօլ աղբէր: Քո ասածով՝ խղճի դէմ չէ՞ որ մենք մեր հայրալ վարձը կորցնենք: Իսկ որ նա մեզ երկուս սի տեղ մի մանէթ է տալիս, սա խղճնվ է, համ: Էսաւեղ խիզն չը կալ: Ո՞ւր է խիզնը... Տօ էլ ի՞նչ երկար խօսենք, ցած դրէք գերան-զիներդ, պրծաւ-գնաց: Թող մեզ էլ նոյն վարձը տայ՝ ինչ որ ուրիշներն են ստանում: Ինչի՞ պէտքէ մենք մերը կորցնենք: Զէ, հիմա մեր տօնն է, քիչ կը պատահի էսպէս տօն: Քանի՞ տարի սպասեցինք: հիմի պէտքէ տեղը հանենք: Զէ, բարեկամ, անցածն անցաւ, էլ հինը չփալ:

Այս ասելով, եարօսլաւցին գերանդին դրեց խօսին, ինքն էլ նստեց:

Պալտաւցիները քաղը դադարեցրին և անվճռականութեամբ լուս կանգնած էին:

— Ցգէրը դրան միը լսի, զիսից գատարկ դատարկ դուրս է տալիս, համոզում էր «խղճով» զիւղացին: Մի՞թէ լաւ կը լինի՝ եթէ մեր խօսքին չը կանգնանք:

Բայց ըստ երեսվթին այդ քարոզը ձախ բարխառոյ յանապատի պէտքէ մնար: Պալտաւցիներից մի քանիսը, առանց խօսք ամելու

տեղնուտեղը նստեցին: Միւսներն անվճռականութեամբ վիճում էին:

Ամենքն այն եղակացութեանն էին դալիս, որ սեփականութիւնը կորցնելը խելօր բան չէ. ամենքի գլխում այն զուրեկան միտքն էր պատում՝ որ հարիւրաւոր ոուբլու փոխարէն կարող են երկուհարիւր աշխատել, և իրար լեակից բոլոր բաղւորներն էլ նստեցին: Կանաչը նստողներից առաջինն եղան, եարօսլաւցու առաջարկութեանը նրանք միանգամից հաւանեցին. միայն «խղճով» գիւղացին չը նըստեց, բայց նա էլ կանգնած մնաց և գերանգուն լենուած, ընկաւ փիլիսոփայական դատողութիւնների մէջ:

— Էլ ի՞նչ ես ծառածում, իմաստուն, նստի՛ր, պրծաւ-գնաց. խօմ մենակ դու չ՛ս, ամենքս պէտքէ պատասխան տանք, համոզում էր եարօսլաւցին:

— Խղճով չէ, խղճով չէ, ծանրութեամբ ասում էր զիւղացին, բայց և անվճռականութեամբ նստեց միւսներից քիչ հեռու, կարծես վախենում էր, որ կը վարտկուի:

— Հա-հա, խղճով չէ, բաս ինչի՞ նստեցիր, ծաղրեց մի կին:

— Ի՞նչ անեմ, խօմ մենակ մնալու չեմ, բարկացած վրայ բերեց զիւղացին, խօմ չեմ

կարող ընկերներից յետ մնալ: Միշտ էլ կասեմ, որ խղճով չէ, խղճով չէ:

— Ո.՛, էսպէս աւելի լաւ է, անհոգութեամբ սրախօսում էր եարօսլաւցին, խիստ գոհ լինելով, որ յաշող անցաւ իր առաջարկութիւնը: Ոտքերդ տնկիր, ձեռքդ ծալիր ու շվացրու:

Սյս ասելով նա շվացրեց, իսկ կանաչը ծիծաղեցին: Ընդհանուր տրամադրութիւնը ուրախ էր:

Այդ ժամանակ մի քանի սաժէն հեռու, փոշոտ ֆանապարհին մի ձիաւոր երեւաց: Դա լայն թիկունքաւոր, շէկ բեղ-մօրուքով, փոքր ու շարժուն մոխրագոյն աչքերով մի մարդ էր: Ամբողջովին փոշոտ, նա բաւական արագ էր մօտենում և շուտ-շուտ ձիուն մտրակում էր:

Դա կալուածատիրոջ գործակատարն էր, որը պէտքէ հսկէր բաղւորների վրայ: Նա բաղւորների մի խմբից միւսն էր անցնում: Ամեն խումբը 40-50 հոգուց էր և միմեանցից կէս վերստ հեռու էին աշխատում:

— Ե՛լ, ի՞նչ էր նստել, էդ ի՞նչ նոր բան է. ելէ՛ք, շուտ, հրամայեց նա խռայու ձայնով ու բարկացած մտրակն օղի մէջ շարժեց: Սակայն ոչ ոք տեղից չը շարժուեց:

— Ասում եմ՝ ի՞նչ էր վէր թափուել, խլա-

ցե՞լ էք, ի՞նչ է։ Սրա հետ գործակատարը մի քանի թունդ խօսքեր էլ ասաց, որ առհասարակ շատ էք սիրում։

— Լաւ, գու ի՞նչ ես գոռգոռում, ուզում ենք ճաշել, ճաշի ժամանակ է, այ թէ ի՞նչի ենք նստել, պատասխանեց աշխատաւորներից մէկը։

— Խելառել էք, ի՞նչ է, կատաղած կոչեց գործակատարը։ — արեք նոր է բարձրացել, իսկ դուք ճաշ էք ուզում։ Շատ ժամանակ է ուտելներդ։

— Շատ է թէ քիչ բայց գործի չենք կանգնի մինչև չը ճաշենք։

Գործակատարը շփոթուեց։ Ասենք նա իսկոյն հասկացաւ բանի էութիւնը։ «Սատանի ճուտ» էր, ինչպէս ինքն էր իրան անուանում, և խօսակցութեան ձերից ըմբռնեց, որ այստեղ ուրիշ բան կայ։

Այդ կողմից նա խիստ հոտառութիւն ունէր, և վայրկենապէս մաքից «գործագուլ» խօսքն անցաւ։

Որպէս փորձուած ու այդ տեսակ գործերում հմուտ մարդ՝ նա յանկարծ փոխուեց ու փափկացաւ, որ ուղիղ ասած զարմանալի քիչ էր սազում նրա խորածանկ դէմքին։

— Քը մ... այ թէ ինչ. խօսեց նա ինքն իրան։

Տեսնենք՝ այդ ի՞նչպէս է որ ճաշել էք ուզում։

Նա մին դարձրեց ու յետ քշեց։ Մի քանի րոպէից վիաւը եկաւ։ Պալտաւցիները գգալ-ները հանեցին ու մօտեցան։ Նրանք լուս էին ու խոժու։ Միայն եարօսլաւցին քթի տակ ծիծաղում էր ու մէկ մէկ սրախօսում կանանց հետ, որ նրան աւելի էին հասկանում։

Դաւադիրները լաւ չէին ըմբռնում իրանց արածը և ուտում էին զանդաղութեամբ, որովհետեւ նոր էին նախաճաշել և ճիշտ որ ոչ մէկը սոված չէր։

— Թիւ՛, յանկարծ թքեց եարօսլաւցին։ Սա վիաւ է, սա կորկոտ է։ Էս ի՞նչ է, տղէրք, խոզի կերակուր է, մարդ կարող է սա ուտել։ Դէն զցեցէք գգալներդ, այսպիսի ուտելիքով մենք չենք աշխատել։

Նա գգալը շպրտեց ու վիաւի ամանը շուռ տուեց։ Սարսափելի ծիծաղ բարձրացաւ և մէկը միւսի յետերից բոլոր ամանները թափուեցին։ Պալտաւցիներն սկսեցին թքել այս ու այն կողմը։ Պարզ հասկանալի էր՝ որ այս բոլորը մահանաներ էին և ուրիշ ոչինչ։

Գործակատարը մռալյուեց։ Նրա ձեռքերը բարկութիւնից զողացին, բայց իրան զսպեց և ոչ մի խօսք չարտասանեց։ Լաւ գիտէր՝ որ ամեն մի ասած խօսքը թունդ հայնոյանք էր

լինելու: Լարուած հանգստութեամբ մօտեցաւ պղնձին, փորձեց փլաւը, որ ճիշտ որ ոչ մի մահանայ չունէր, ուրեմն գործը լոյսի պէս պարզ էր:

— Է՞նչ է, ուղղակի աշխատել չէք ուղում, այդ է ձեր միտքը, էլ ի՞նչ էք լոել, ասացէք՝ որ կալուածատիրոջն իմացնեմ:

— Ինչ որ աեսար՝ այն էլ ասա, պատասխանեցին նրան կարուկ կերպով:

Գործակատարը կատաղութեամբ թքեց, նրանեց ծին ու արագ հեռացաւ դէպի գիւղը:

Մինչդեռ հարեւան խմբի քաղւորները հեռուեց նկատել էին, որ պալտաւացիները ինչ որ անում եմ: Գործակատարը հեռացաւ թէ չէ՝ նրանցից մէկը եկաւ իմանալու գործի էութիւնը: Քաղւորները սպասողական զրաւթեան մէջ՝ հազիւ էին շարժում գերանդիները, բացի այդ՝ գործակատարն էլ չկար, ուրեմն՝ կարելի էր չաշխատել:

Դաւադիրները հանեցին «չիրուխները» թիւթիւն լցրին ու սկսեցին ժխել:

Պալտաւացիները հանդիսաւ նստած՝ կողմնակի նիւթերի մասին էին խօսում: Երեսում էր՝ որ նրանք իրանց նոր զրութեանը հաշտուել են: Կէս ժամից աւելի անցաւ՝ երբ գիւղի կողմից հանապարհին մի մեծ ամպ երևաց, ապա ձի-

աւորներ, իսկ ամենքից յետքը՝ կալուածատիւրոջ գեղեցիկ կառըք:

— Օհօ, տղէրը, տեսէք ինչ փոշի հանեցինք. ուրախ սրախօսեց եարօսլաւցին:

Զիաւորները մօտեցան. սրանք կալուածատիրոջ գործակատարը և միւս ծառայողներն էին. նրանց մէջ էր և զիսաւոր կառափարիչը — հաստափոր գերմանացին՝ որ միայն հայհոյանքներ դիտէր:

— Էս ի՞նչ խաբար է. ի՞նչ բաներ էք մօգնում. էշ գեղրցիներ, դգումներ: Գիտէք զրահումար ուր կը հասնէք, Սիրիր, Սիրիր, լաւ հասկացէք, օրէնքով Սիրիր կուզարկեն: Դուք ապստամբներ էք, բունթ էք անում:

Այդպիսի աղաղակներով մօտեցան գործակատարները. իսկ գերմանացին բարկութիւնից կաս-կարմիր կրակ էր կարուել՝ որ չի կարող կալուածատիրոջ ներկայութեամբ հայհոյել:

Պալտաւացիները ոչ մէկին ուշադրութիւն չը դարձրին և շարունակեցին իրանց խօսակցութիւնը:

Մօտեցաւ կալուածատէրը: Պինդ կազմուածքով, լայն թիկունքաւոր, ածիլած երեսով ու խուզած մազերով 40-ի մօտ մի մարդ էր: Հաղուստը մետաքսից էր: Շարժուածքները կոկիկ ու արժանավայել: Ամբողջ դաւառում նա

յայտնի էր որպէս մեծ զարդացողութեան տէր, ժողովրդի մասին հոգացող հասարակական գործիչ: Նա հարուսա զրադարան ունէր, որտեղ ստացւում էին բոլոր լրագրներն ու ամսագրներն և գեղեցիկ կազմուած պահւում: Գիւղյիների մէջ նա յայանի էր որպէս քաղաքավարի ու եօլայ գնացող մարդ: Միշտ սրանց հետ «Դուք» -ով էր խօսում և բարեզողներին զիսարկը հանած զլուխ տալով էր պատասխանում: Որպէս բարեկիրթ բնութիւ տէր՝ նա հայհոյանք ու կոպիտ դարձուածքներ չէր սիրում, ուստի իր գործակատարներին պատւիրում էր, որ բանւորների հետ քաղաքավարի լինեն:

Կալուածատէրը դուրս եկաւ կառքից, մօտեցաւ բանւորներին: Գործակատարները լոեցին, իսկ պատաւցիները ուրքի կանդնելով զըլիսարկները հանեցին:

— Պարոններ, դուք կերակրից գո՞ն չէ՞ք, հարցը նա առանց կեղծիքի: Պատասխան չկար:

— Շատ ուրախ եմ, որ այդ սիսալ է. խիստ կը ցաւէի եթէ ուղիղ լինէր: Ա.ծբողջ գաւառը գիտէ, որ ես բանւորներիս լաւ եմ կերակրում: Ուրեմն, այստեղ, պարոններ, մի այլ պատ-

ճառ կալ, դուք ուղում էք ծեր պայմանը խախտել...

— Մենք պայման չենք կապել, վրայ բերեց մէկը անվատահ:

Այն արժանաւորութիւնն ու հանդարառութիւնը, որով խօսում էր կալուածատէրը՝ կարծես գաւաղիներին ամաչեցրեց: Նրանք արդէն սկսել էին իրանց մեղաւոր զգալ: Ուշիմ եարօսլաւցին այդ հասկացաւ և պատրաստուեց բոլորի փոխարէն խօսելու:

— Այս, մենք գրաւոր պայման չենք կապել, բայց խղճով ենք կապել... Ասենք՝ Խրդակի պայմաններն ամենքի համար պարտադիր չեն... խօսեց կալուածատէրը արհամարհական ձայնով: Լաւ, վերջնական ասելիքներդ ի՞նչ է:

Եարօսլաւցին առաջ անցաւ:

— Մենք Ձեզանից ոչինչ չենք ուղում: Խրնդառում ենք հաշիւներս մաքրէք, մեզ արձակէք, համարձակութեամբ պատասխանեց նա:

Պալտաւցիներն իրար նայեցին: Բատ երեոյթին նրանք այդպիսի ելքի չէին սպասում:

— Ի՞նչպէս թէ հաշիւներդ մաքրեմ, թէ թէ երկիւղով հարցը կալուածատէրը: Եւ միշտ որ վախենալու բան ունէր: Այդ գէպը բում նա մի բանի հազարի վնաս կստանար:

Եթէ մի ամբողջ խումբ արձակէ խոտի մի

մեծ մասը անքաղ կր մնալ: Ամբողջ երեք օրում  
ուրիշ բանւոր չի կարող ճարել—գործի ամե-  
նատաք ժամանակն է: Իսկ արևն անխիղճ կեր-  
պով ալրում է: Մի օր ել որ անցնի՝ խոտք  
կր չորանալ՝ կանպէտքանալ:

— Այնպէս, հաշիւներս մաքրեցէք, յարգան-  
քով շարունակեց եարօսլաւցին: Դուք ուզում  
էք, որ խղճով լինի, մենք էլ ենք ուզում: Իսկ  
այժմ քաղւորին խղճով մանէթ ու կէս են  
վիճարում, կնիկմարդուն մի մանէթ: Մենք էլ  
կր գնանք այնտեղ՝ ուր այդ զինը կր տան:  
Պարապ չենք մնալ, ուզողներ շատ կան:  
Ձեզ այժմ խնդրում ենք, որ հաշիւներս մաք-  
րէք:

— Հա, ուրեմն դուք ուզում էք ինձ մեծա-  
մեծ վնասներ հասցնել, հա՞ս է՞հ, այդ էլ զեռ  
կր տեսնենք: Մոռացել էք, որ ձեր անցագրերը  
ինձ մօտ են, իսկ առանց անցագրերի ոչ ոք չի  
ընդունի: Ես ոչ հաշիւ կր տամ ձեզ, ոչ էլ ան-  
ցագրերդ: Զէ, սիրելիքս, լաւ չէք մտածել,  
սխալուել էք:

— Զէ, մենք ինչու պէտքէ սխալուենք: Էդ  
արդէն մեր փոխարէն թող ուրիշները սր-  
խալուեն, յարգանքով, բայց և ծաղրով պատաս-  
խանեց եարօսլաւցին: Թող անցագրերս ձեզ  
մօտ մնան, բայց մենք կերթանք: Ում որ բան-

ւոր հարկաւոր լինի անցագրեր չի հարցնի, այն-  
պէս էլ կընդունի: Այժմ ժամանակն ուրիշ է...  
— Իսկ եթէ վնասներս դատարանով պա-  
հանչեմ...

— Է՞հ, ինչե՞րս պէտքէ վերցնէք... եղաւ  
պատասխանը:

Զը նայելով արտաքին հանգստութեանը՝  
կալուածատէրը կարեոր համարեց ճակատի  
քրտինքը սրբել: Երեսում էր, որ նրա պատ-  
րաստած բոլոր փաստերը հատնել էին: Ժա-  
մանակն անցնում էր: Ամեն մի ժամը նրան  
հարիւրաւոր ուռելիիներ արժէք: Պէտքէր ինչ-  
պէս էլ որ լինի մի կերպ վերջացնել: Հաշիւը  
պարզ էր, որ եթէ ամբողջ խումբն արծակէ՝  
աւելի մեծ վնասներ կր կրէ՝ քան նրանց պա-  
հանչը կատարելը:

— Դուք ինչքան էք ուզում, հարցրեց կա-  
լուածատէրը:

— Ինչքան որ ուրիշներն են ստանում, —  
աղամարդոցը մանէթ ու կէս, կնիկմարդոցը՝  
մի մանէթ:

— Լաւ, համածայն եմ, միայն պայման կր  
կապեմ և այն ժողանակ...

— Ո՛չ, մենք պայման չենք կապի, ձեռնտու  
չէ... օրավարձք քանի գնում՝ աւելանում է...

— Այդ ի՞նչ էք խօսում... բայցի ձեզնից դեռ

տասը խումբ էլ են աշխատում այդ գնով, մի-  
այն դուք կը լինեք այդպէս թանկ։ Ախար ես  
ուրիշ բանւոր կը գտնեմ։

— Դեռ յայտնի չէ՝ թէ միւս խմբերն ի՞նչ-  
պէս կը համաձայնեն... նայեցէ՞ք...

Կալուածատէրը նայեց աշխատող միւս խմ-  
բի կողմբ։ Հեռուից կարելի էր նկատել, որ  
աշխատանքն այնտեղ էլ է դադարեցրած։ Այդ  
բանը վերջնականապէս կատաղեցրեց նրան և  
նա հազիւ զսպեց իրան ու հայհոյանքներ շը  
թափեց։

— Շատ ցաւում եմ՝ որ մինչև այժմ խօս-  
քեր ու խելացի փաստեր էի բերում այնտեղ՝  
ուր հարկաւոր էր միայն արհամարհանք, յայտ-  
նի զզուանքով խօսեց կալուածատէրը, թէն-  
իեզուի վրայ արդէն պատւում էին «հայվան-  
ներ, գարշելիներ, խարեբաներ» և նման խօս-  
քերը։ Կատաղած նա կառք նստեց ու սլացաւ  
դէպի միւս խումբը։ Նրան հետևեց գործա-  
կատարների վոհմակը ծալրահեղ անհանգստու-  
թեամբ։

— Ո՞ օ, այժմ, պարոն տէր, զրպանդ լու-  
պահիր, կը նիհարի։ Հանաք բան չէ, ամեն մէ-  
կիս առաջուայ վարծին հարիւր մանէթից էլ  
շատ պէտք աւելացնես։ Այս բոլորը նրա զըր-

պանը պէտքէ մտնէր։ — այ թէ հարստութիւնը  
ի՞նչպէս է զիգւում...։

Կալուածատէրոց գնալուց յետոյ այս տեսակ  
խօսակցութիւններ էին տեղի ունենում բան-  
ւորների մէջ։ Քառորդ ժամից յետոյ եկաւ  
գործակաւարը։

— Հէ՞ր, վեր կացէք, շուա, գործի կան-  
գնեցէք։ Ուրիշների վճարած գնով, դէ՛ շուա։  
Միայն պէտքէ կարգին աշխատէք։ Այսօրուայ  
բաց թողածը պէտքէ լրացնէք։

— Լրացնելը՝ կը լրացնենք։ այդ մեր գըլ-  
խի վրայ։ Պարոնը գոհ կը մնայ, ուրախ բա-  
ցականչեցին զիւղացիները։

Եւ իսկապէս, զերանդիները զըրնգզրնգա-  
ցին, զործը տաքացաւ կրկնակի եռանդով, ու  
աշխուժով մշակները բանի անցան։ Ամեն մէկը  
զգում էր՝ որ ոչինչ չի կորցնում, որ իր  
աշխատանքի համար նոյնքան կստանայ, որ-  
քան ուրիշները, և իսկապէս որքան արժէ աշ-  
խատանքը։

#### IV

Այդ օրն Արտէմն ու Մարթան քիչ զործ  
արին։ Նրանց ձեռքերը դանդաղ էին շար-  
ժւում, կարծես կապած լինէին։ Շուտ-շուտ

Նրանք ցած էին դնում գործիքներն ու հանգստանալու նստում. նստում էին երկար, ուշադրութեամբ նայում էին այն կողմը՝ ուրատեղի ուներ կալուածատիրոջ ու մշակների վէճը: Նրանք ադահութեամբ լսում էին բոլոր այնաեղ խօսածը, բաց չէին թողնում ոչ մի խօսք, ուշադրութեամբ հետեւում էին գործի բնթացքին և սրտի տրոփիւնով սպասում էին հետեւանքին: Արտէմը խսդուած էր և Մարթայի անհամբեր նկատողութիւններին մռայլ լութեամբ էր պատասխանում, բայց այդ արտաքին խստութեան ու մռայլութեան տակ թագնուած էր անպատում ուրախութեան նոր սկսող զգացմունքը: Թոսկէ առ րոպէ նրա սրտի բարախումն ուժեղանում էր, նա զգում էր՝ որ առանց իր մասնակցութեանը որոշում են իր վիճակը:

Եւ երբ այնտեղ ամեն ինչ վերջացաւ, նա կանդ առաւ, ծանր հառաչեց, որպէս մի մարդ, որ անընդհատ աշխատանքներից յետոյ վերջապէս զլուխ է բերել մի մանր գործ:

— Տուն դնալու ժամանակ է, ասաց նա, դառնալով Մարթային, մի գրօշ օրավարձին այսպանն էլ շատ է:

— Ճիշտ որ շատ է, առանց տատանուելու

համաձայնուեց Մարթան: Մենք ուրիշներից ոչինչով պակաս չենք:

Այս ասելով՝ նա անկեղծ հպարտութեամբ զլուխը բարձրացրեց, կարծես ճիշտ որ մի մեծ բան էր: Հպարտութեան այդ արտայալութիւնը աւելի քան սազում էր նրան և անձանօթ մարդը կարող էր կասկածել՝ որ այդ կոպիտ, այլուած կաշու տակ՝ աղնւականի արիւն է հոսում: Բայց մեզ հասաւատաբար յախնի է՝ որ նա հասարակ զիւղացու աղջիկ և հասարակ գիւղացու թոռն է:

Արտէմն ուրախացած բջում էր ծիերը: Նա սկսեց երգել, այնպէս որ Մարթան իսկ զարմացաւ: Զարմանում էին և անցորդները և զիւղացիները: Արտէմին ամենքը ճանաչում էին որպէս մի տիրուր և մռայլ մարդ, ճիշտ է, առաջ նա ուրախ մարդու համբաւ ուներ, բայց երբ դժբախտութիւնը կոխեց նրա դուռը և կարգին կարողութեան տիրոջը օրավարձով աշխատող մշակ դարձրեց, նա մռայլադէմ դարձաւ, լոեց, մէշքը ծռեց, զլուխը թեքեց: Այժմ նա յանկարծ ուղղուեց և աչքերը ինչ որ լանդուգն ուրախութեամբ փայլեցին: Նա անսաելի ուրախ էր:

Մարդիկ զարմանում էին նաև այն բանին՝ որ տէրտէրակնոյ բանւորներն այսպէս շուտ

Են դարձել աշխատանքից. սովորաբար՝ հակառակն էր լինում. տէրտէրակինը սիրում էր՝ որ իր մշակները ամենքից փաղ գնան զաշտը և ամենքից ուշ վերադառնան։ Այն ինչ՝ այսօր դեռ ոչ ոք չէր վերադարձել։ Սրեր դեռ չէր թեքուել արեւմուտք։

— Տե՛ս, Մարթա, անխելք չը լինես, սիրաւեր կերպով դիմեց Սրտէմն իր ուղեկցուհուն։

— Ինչու պէտքէ անխելք լինեմ, թեթև վիրաւորանքով պատասխանեց Մարթան։

— Ո՞վ դիտէ, լաւ կաց։ Սրանից յետոյ չը պէտքէ կորցնենք մեր ունեցածը։ Մի անդամից լաւ չէ, բայց քիչ-քիչ... Միայն նայի՞ր — չը վախենաս... թէ չէ կնիկմարդոցդ ձանաչում եմ, մի փոքր բան լինի թէ չէ իսկոյն յետ կը քաշուէք.... Այդ վհուկը ողիղ որ շատերին կը վախեցնէ... իսկական սատանայ է։

— Ա՛յ քեզ բան, գտար վախենալու բանք. ինքնահաւանութեամբ պատասխանեց Մարթան, կարծես ճիշտ որ ոչ մի ժամանակ չէր վախեցել տէրտէրակինոցից։

Սրտէմը շվվացրեց ու աւելի ուրախ երգեց, իսկ տէրտէրի կուշտ ծիերը արագութեամբ անցան դիւղը։

Ուրախ էր Սրտէմի սիրտը։ «Ա՛յ թէ կը կատաղի մեր վհուկը, այ թէ հայոյանք կը

բարձրանայ, հա... չարախնդութեամբ մտածում էր նա և մտքով պատկերացնում տէրտէրակինոցը՝ թափուած մաղերով, չարութիւնից հայաթում այս-այն կողմն ընկնելիս, իսկ ինքը, Սրտէմը, կանգնած է նրա առաջ գրլիսարկով և տիրութեամբ գետին չի նայում, այ արհամարհանքով ժպտում է։

Սակայն ոչ մի այդպիսի բան չը պատահեց, որ Սրտէմին խիստ զարմացրեց։ Տէրտէրակինը նրանց դիմաւորեց հայաթի դռանը և զսպուած ձայնով խոժուած դէմքով հարցըրեց։

Ինչու ալսքան վաղ եկաք։

— Բեզպեցինք։ Վաղ էինք գնացել. ոչ մի-այն զիւղացիք, աքաղաղներն իսկ ընած էին, պատասխանեց Սրտէմը զսպուած համարձակութեամբ։ Նոյն իսկ իրան զարմանալի թուաց՝ որ այդ չափ երկար է խօսում երեցկնոչ հետ։ Նա շատ համարձակ սկսեց, բայց իսկոյն անյարմարութիւն զգաց, նրա ծախնը դողաց ու ցածրացաւ։

— Շատ քաղեցիք, հարցըրեց երեցկինը։

— Շատ է թէ քիչ, բայց կէս օրավար կը լինի։

— Հըմ... կէս օրավար... Լաւ քաղորճեր էք, բան չեմ ասում, խօսեց երեցկինն ինքն իրան և առանց ասելիքը շարունակելու սե-

նեակ մտաւ, իսկ Արտէմն ու Մարթան զարմացած իրար նայեցին:

Երեցկինը տարօրինակ, իր համար աճսովոր տեսք ունէր: Սովորաբար՝ նա կամ չղային սաստիկ լարուած դրութեան մէջ էր լինում, բոլորի վրայ չարանում էր, կատաղում, ամենքի վրայ գոռում, կամ սաստիկ յոդնած էր լինում, որ յաջորդում էր չղային գրգոռումին: Այսպիսի դէպքում նա հիւանդ, զրկուած, ճնշուած արարածի տպաւորութիւն էր թողնում: Ամենքի վրայ գանգաւում էր և իր ծառաներին ամենավրդովեցիչ յանցանքներով մեղաղրում:

Այսանգամ նա աշխոյժ ու զսպուած շըրջում էր սենեակում, ըստ երևոյթին մի լուրջ մտրի վրայ կենդրոնացած: Կարելի էր հաստատապէս ասել՝ որ նա մի նշանաւոր ծրագիր էր կազմում, որ նրա կենսական ուղու վրայ մի դժուարութիւն էր հանդիպել, որը պէտք էր հեռացնել: Նա մօտեցաւ հայր Լեվի սենեակի դրանն ու ծեծեց:

— Լեվ, զարթիր, հարկաւոր ես:

— Ի՞նչ կայ, հարցրեց քնաթաթախ հայր Լեվը:

— Պէտք ես, հարկաւոր գործ ունեմ, կը բնեց երեցկինը:

Պէտք է ասել, որ ինչքան էլ չարացած

լինէր՝ ամուսնու հետ երեցկինը հանգարու էր խօսում: Նրա հանգստութիւնը յարգում էր: Հայր Լեվը անսովոր արագութեամբ վեր կացաւ, որովհետեւ այդպիսի ընտանեկան խորհուրդների շատ քիչ էր արժանանում, այդ ցոյց էր տալիս, որ գործը խիստ կարեւոր է, և բացի այդ՝ դա մի առանձին պատուի նշան էր. նա դակին մտաւ քնաթաթախ աչքերով առանց վերնազդեստի: Սկսուեց ընտանեկան խորհուրդը:

— Դու շարունակ քնած ես և ոչինչ չը դիմես. դիմեց նրան երեցկինը:

— Ի՞նչ կայ, վախեցած հարցրեց հայր Լեվը: Քնաթաթախ՝ նա վախեցաւ աւելի քան հարկաւոր էր:

— Այն կայ՝ որ կալուածատիրոջ բոլոր մշակները աշխատանքից հրաժարուել են և յաւելումն պահանջել: Մեզ մօտ էր Մաթէ գործակատարը, նա պատմեց: Կալուածատիրոջ գրպանից, ասում է, մի քանի հազար մանէթ աւելի դուրս կը թռչի: Այլ թէ ի՞նչ կայ:

— Դրանից ի՞նչ, հարցրեց հայր Լեվը առանց հասկանալու՝ թէ զրանից իրան ինչ վրանգ է սպառնում:

— Ի՞նչպէս թէ զրանից ինչ: Դու կարծում ես մերոնք դրանից չե՞ն օդտուի. Նրանք վա-

զուց արդէն ատամները սրում են, իսկ հիմա հէնց այնպիսի ժամանակ է՝ որ ոչ մի տեղ ծառայ չի կարելի ճարել, ամենքը լաւ վարձ են սաանում, ամեն տեղ աշխատաւոր է հարկաւոր։ Գիտե՞ս ինչ խաղ կարող են խաղալ մեր զբլիին։ Ամենքը միասին կը թողնեն կը հեռանան—այն ժամանակ արի ու զործ զուխ բեր...»

— Դարտակ բան են զրանք... հանդատացնում էր հայր Լեվը։ Այդ բոլորն աւելորդ երկիւղ է։ Նրանց անցագրերն ինձ մօտ է, այնքան լիմար չեմ՝ որ տամ։

— Դու բան չես հասկանում, բարկութիւնը հազիւ զսպելով կարեց խօսքը երեցինք։ Այժմ անցագրի ժոմանակը չէ։ Ամենքը գէս դէս ընկած բանւոր են որոնում։ Անցագիրն ինչի՞ պէտք, միայն թէ աշխատաւորներ լինեն։ Իսկ մէնք անցագրերով հանդերձ ծեռնունայն կը մնանք։

— Բաս ի՞նչ անենք, յուսահատուած հարցրեց հայր Լեվը։

— Այն անենք, որ մահանաներ անելու տափթ չը պէտքէ տանք։ Ախր նրանք հիմա մահանայ են որոնում։ Մանաւանդ այդ Արտէմը, անսպիտանը սատանալ է, ի՞նչ սատանայ։ Ես դիտեմ նրա միտքն ի՞նչ է։ Այսօր վրան նախիցի թէ չէ՝ ամեն ինչ տեսալ... Այժմ զի-

աւս ի՞նչ պէտքէ անես.—ինձ անլարմար է, շատ անսպասելի կը լինի իմ կողմից, ախար ես նրանց երես չի տալիս... Արտէմին կանչիր ու մի լաւ բաժակ արաղ տուր։ Դէն, մի բան ասա, հնարիր, ասա՝ զարունա եկել է, ասա այդ առթիւ է, ասա որ աշխատելու օրերն են, ոյժերը պէտքէ թարմացնել... այդ բոլորը դու աւելի լաւ կասես. դու խօսել իմանում ես։ Միայն վերնազգեստդ հազիր, թէ չէ՝ անլարմար է։ Թէն մշակ է բայց անլարմար է։ Ուրիշներին էլ կը պատմէ։ Հա, ի դէպ, բիշ մնաց մոռանալի։ այսօր նրանք շատ վաղ գնացին գաշտը, զրա համար նեղացել են, քեզանից ասա, որ պատահմամբ իմացար և խիստ բարկացար, և որ այսուհետեւ այդ բանն որդելում ես։

Հայր Լեվը համաձայնեց՝ որ իսկապէս պէտքէ վերնազգեստը հազնել, իրանից տւելացրեց նաև զիխարկը, անսպէս որ արդէն չափից դուրս հանդիսաւոր բան գուրս եկաւ։ Մարթալին պատուիրել էին, որ Արտէմին կանչէ։ Մարթան հետաքրքրութիւնը չեր կարողացել զսպել և զռան ճեղքից ականչ էր դրել ընտանեկան խորհրդին։

— Արտէմ քեռի, եկեք արաղ խմեցէք, շունչը

կարուած զիմեց նա Արտէմին, այնպէս որ սա  
նոյնիսկ քիչ վախեցաւ:

— Ի՞նչ արադ, հարցրեց Արտէմը:

— Լաւ արադ, շատ լաւ, երեւ տէրտէրն  
ու տէրտէրակինը վատ արադ չեն խմի:

— Գժռել ես, ի՞նչ է, ի՞նչ տէրտէրի արա-  
դի մասին ես խօսում: Կարելի է գողացել ես:

— Ի՞նչու պէտք դողանալի, այ քեզ բան,  
ախար ես արադ չեմ խմում: Չեզ համար պէտ-  
քէ գողանամ, ի՞նչ է: Վիրաւորուած խօսեց  
հել որ երեցինոցից թագուն քաղցրեղէններ  
ուտէր:

— Տէրտէրակինը վախեցել է մշակների  
ապստամբութիւնից, այժմ կասկածում է որ  
մենք էլ... Շարունակեց Մարթան, դրա հա-  
Արտէմին հրամայեց, կանչիր, ասում է,  
մար տէրտէրին հրամայեց, կանչիր, ասում է,  
ապստամբութիւնից, արադ տուր, ասում է՝ պէտք սիրան  
հագնուել է, կարծես պատարագի է պատրաս-  
տուել:

Եւ Մարթան չարախինդ ծիծադ արձակեց:  
— Է՞հ, ոչինչ, արադից չեմ հրամարուի, վատ  
բան չէ, մանաւանդ աշխատանքի ժամանակ  
ուելորդ չէ... Տես, Մարթա, մեծ բաժակը տուր

(այս ի միջի ալոց ասուեց): Բայց մի քիչ ուշ  
են սիրտս -առնում...:

— Բարեւ, պարոն Արտէմ, սիրալիր կերպով  
զիմաւորեց տէրտէրը Արտէմին, ի՞նչպէս է  
քէֆով...

— Ոհո, մտածեց Արտէմը, արդէն պարոն  
էլ գարձայ: Ասենք նա վիտէր՝ որ տէրտէրը  
փափկասիրտ մարդ է, և շատը նրանից էր զար-  
մանում՝ որ անսովոր էր «պարոն» խօսքին:

— Ոչինչ, փառք Աստուծոյ... մեր աղօթենե-  
րով... պատասխանեց Արտէմը, թէև շատ էր  
կասկածում, որ տէրտէրն իր համար աղօթե-  
լիս լինի:

— Այսօր քաղի գնացել էիր:

— Այո, գնացել էի:

— Ասա խնդրեմ, այնտեղ ի՞նչ է պատահել.  
այդ ի՞նչ գէպը է տեղի ունեցել կալուածա-  
տիրոջ մարդում: Մշակները ինչից են դժոհն:

— Ասաւուած զիտէ, ի՞նչ են ուզում նրանք:  
Միթէ ալդպիսի բան կայ: Ես ոչինչ չեմ լսել.

— պատասխանեց Արտէմն այնպիսի ձախով  
որ կարծես իսկապէս ոչինչ չէր տեսել ու լսել  
ու առաջին անգամ տէրտէրից է իմանում այդ  
ամենը:

— Միթէ չես լսել. արդէն ամլորդ գիւղը

գիտէ, խօսեց տէրտէրն այնպիսի ծայնով՝ որ  
իբր թէ ճիշտ որ հաւատաց Արտէմի ասածին:

— Աստուած վկայ՝ ոչինչ չեմ լսել. եթէ չէք  
հաւատում՝ կուզէք երդուեմ, այս ասելով՝ Ար-  
տէմը երեսը խաչակնքեց:

Արտէմը բարեպաշտ մարդ էր, և եթէ այս-  
տեղ երդում էր այդ հրանից էր՝ որ չէր հա-  
ւատում տէրտէրի անկեղծութեանը: Դրա փո-  
մանը՝ նրա ոչ մի խօսքին չը նայելով Արտէմի երդ-  
— Եւ ի՞նչ էլ կարող եմ իմանալ, շարունա-  
կեց Արտէմը: Ես իմ գործով էի զբաղուած, քա-  
ղելիս՝ խօսելու ժամանակը չէ, ուրիշին լսելու  
ժամանակը չէ: Այս, աւելի լաւ է՝ Մարթալին  
հարցրէք, նա ինձ հետ էր: Այս ասելիս՝ նա  
Մարթալին նայեց որը երկու աղած վարունկ  
ու շիշով արագ բերեց ներս:

— Մարթա, դու ոչինչ չե՞ս լսել մշակնե-  
րի մասին, դիմեց նրան Արտէմը:

— Ես, մշակների մասին, ի՞նչ էք խօսում,  
ինձ, որ ես մշակների հետ եմ ընկնում, այն  
էլ տէր-հօր ներկայութեամբ: Ի՞նչ մշակների  
չում, ես այդպէս բաներով չեմ դրադա-  
սում, ես այդպէս բաներով չեմ դրադա-  
սում. առաջարկում եմ:

սաց Մարթան և նեղացած ձեանալով՝ դուրս  
եկաւ սենեակից:

— Կեցցե՞ս, ի՞նչ լաւ աղջիկ է, լաւ խաղ  
սարքեց, մտքումը գովում էր Արտէմը:

— Էհ, լաւ, Աստուած ձեզ հետ, ձեռքով  
արեց տէրտէրը. Ես քեզ կանչեցի որ քաղը  
չնորհաւորեմ. այդ իմ սովորութիւնս է, միշտ  
չնորհաւորում եմ... Այժմ դժուար միշոց է,  
աշխատաւորը պէտքէ եռանդի գայ, դործի  
ծանր ժամանակն է:

— Շատ շնորհակալ եմ, տէր-հայր, յար-  
գանքով զլուխ առեց Արտէմը: Բայց զիտէք,  
ասան մէջ միշտ գործ լինում է, ոչ մի ժամա-  
նակ պարագ չենք մնում... ոչ մի ժամանակ  
աւելորդ չէ...

— Դէ, իհարկէ, ես միշտ այդ ասում էի,  
միշտ կարգադրում էի, բայց երեցկինը մոռա-  
նում է, այնքան հոգս ունի, մոռանում է... իհար-  
կէ, աշխատողին միշտ պէտքէ... Ահա, առ...

Այս խօսքերով տէրտէրն Արտէմին մի բա-  
ժակ արագ տուեց: Արտէմը բաժակն առաւ,  
երեսը խաչակնքեց և «ծեր կենացն» ասելով՝  
գատարկեց ու սկսեց վարունկ ուտել: Ապա  
զլուխ առեց և գէպի դուռը շարժուեց, իր  
պլուխ առեց և գէպի դուռը շարժուեց, իր  
պարտականութիւնները կատարած համարելով:

— Հա՛, լսի՛ր, էլի ի՞նչ էի ուզում ասել, սպա-

սի՞ր. կանդնեցրեց նրան տէրտէրը, ձեռքը բարեկամաբար դրեց Արտէմի ուսին՝ և ձայնը ցածրացնելով՝ շարունակեց, իմ ականջն ընկաւ՝ որ այսօր ձեզ շատ փաղ են զրկել աշխատանքի... Այդ սխալմամբ է եղել... ժամացուցը առաջ էր գնացել... (այս ասելիս տէրտէրը ցոյց տուեց պատի ժամացուցը): Այդ նրանից էր... ևս կարգադրութիւն արեցի, որ այսուհետեւ ալդպիսի բան չը լինի: Զմոռանաս, որ այսօրուանը սխալ էր, ժամացուցը առաջ էր գնացել, դրան ևս խիստ նեղացայ, բայց այլևս այդպէս չի լինել: Դէհ, հիմա գնա՛ ընթրելու, Տէր ընդքեզ:

Արտէմի դուրս գնալուց յետով, հայր Լեզն  
իրան աղաս զգաց: Այժմ նա իր բոլոր պար-  
տականնութիւնները կատարել էր և իրաւունք  
ունէր հանգստանալու: Բայց զրանից առաջ  
նա մտաւ տէրտէրակնոց ննջարանը, իմանալու՝  
թէ արդիօք լաւ կատարեց իր զերբ:

— ՚ը, ոսց է, կարծեմ ես ոչ մի այնպիսի  
բան չասացի... աւելորդ: Կարծեմ ինչոք որ  
պէտք էր: Տարցը եղ նա կէս երկիրացի:

— Ո՞չ ո՞չ, լաւ էր, մեծահոգութեամբ պատասխանեց կինը, և հայր Լեվը, այդ պատասխանից սիրտ առած՝ զնաց կիսատ ըռւճը լը-

բայցնելու, կատարելապէս հաւատացած, որ այդ  
օրն իր բարձր կոչմանը ծառալել է:

Այստեղ Սրտէմը զնաց ընթրելու։ Խոհանոցը տանտէրի բնակարանից քիչ հեռու էր։ Դա հողից շինած սովորական գլւղական խըրդիթ էր փոքր պատուհաններով, որոնց վրայ աղակու փոխարէն շաքարի թուղթ էր կրպ-ցրած։ Այդ հանգամանքի շնորհիւ ձմեռը որքան էլ որ շատ էին վառում՝ այնուամենայնիւ սաստիկ ցուրտ էր լինում, և զրսի փոփոխութիւնները նոյնքան նրբութեամբ էին զդալի լինում ներսի բնակիչներին, որքան և հողմացոյցին։ Այդ պատճառով աղախինն ամբողջ ձմեռուալ ընթացքում չէր հանում իր ըուրքը և պարտականութիւնները կատարելիս՝ յաճախ կանգնած տեղը պար էր զալիս, որ ոտքերը տաքացնէ։ Օյստեղ կար նաև ծի ահազին վառարան, որը վառած ժամանակ Վեղուվի նման նեղքերից ծխի ահազին ամպեր էր գուրս ժայթքում, որի պատճառով աղախինը առանց տէրերից մի բաժակ օղի սահանալու՝ շարունակ զդում էր զինի այն գուրեկան պատոցը, որին այնքան սիրահարներ կան։ Խոհանոցը ձմտելիս՝ Սրտէմը բաւականութեամբ զդաց թարձ կարկանդակի հոսք, որ շատ էր սիրում։

— Լաւ կարկանդակ է, խօսեց նա, բայց  
աւելի լաւ կը լինի սերուցքով:

— Օհօ, պատասխանեց Մարթան, արդէն  
սերուցքի մասին էլ ես սկսել մտածել: Կու-  
զե՞ս գնամ բերեմ: Առառուած վկայ՝ կը գնամ:  
Հէնց թէկուզ մի կուշա ծիծաղելու համար կը  
գնամ տէրտէրանոչից կը խնդրեմ:

Հինդ ըստի չանցած՝ սեղանին զրած էր կար-  
կանդակն ու սերուցքը։ Այստեղ կարծիք յայ-  
տնուեց, որ երեցկինը ցնորուել է, սակայն չը  
նայելով դրան՝ կարկանդակը անողայման լաւ  
ախորժակով կերան։

— Է՞ն, զոնէ վերջին անդամ դոհ մնանք,  
խօսեց Արտէմը, իւզուա ձեռքեռը սոսկ...»

— Արդէն ուղում ես վազր գնալ, կիսա-  
ձայն հարցը Եմ Մարթան:

— ել ինչո՞ւ եմ մնում, կարկանդակ ուտելու...: Թէև Ճիշտ է, լաւ են կարկանդակները, բայց ժամանակ կորցնելը չարժիք: Այժմ ամեն մի օրը մանեթ ու կէս է, իսկ այստեղ ասոր կոպէկ եմ ստանում, կարծեմ ապրելութիւնը բաւական չէ է:

— Արտկմ քեռի, որ գնում էք, հօրս ասացէք՝ թող ինձ էլ դուրս բերէ, ի՞նչ կայ սպասելու։ Գոնէ միջանի կոպէկ կաշխատեմ, յանձնաբարեց Մարթան։

V

Հետևեալ օրը աօն էր: Արտէմք վաղ վեր  
կացաւ ու սկսեց ձիերը մաքրել: Սյսօր նա այդ  
անում էր մի առանձին՝ հրճուանքով — հետեւ  
էլ ասում էր իր վերջին հրաժեշտի ճառը. Ճա-  
ռի միտքն այն էր՝ որ նրանց մաքրում է վեր-  
ջին անգամ, որովհետեւ մտադիր է այսօր և  
եթ նրանցից հեռանալ, որ ուրիշը դժուար թէ  
նրանց ալգաբէս սիրէ ու հոգայ, որ թէև փռուկը  
նրա հոգուն է հասցըրել, բայց ծիերը ոչ մի  
ձեզը չունեն, և նա նրանց հաւատարիմ կը մնայ:  
Մի խօսքով՝ նա այնպիսի բաներ ասաց՝ որ  
սովորաբար հրաժեշտի ժամանակ ասում են  
սիրելի արարածներին, և ըստ երեսովթին՝ նրան  
կատարելապէս հասկանում էին, որովհետեւ  
հանգիստ կանցնած էին, և մի մի անգամ մի-  
այն շարժում էին պոչերը Արտէմի երեսը չոր  
մագերի խուրծով ծածկելու, ի նշան երախտա-  
գիտութեան:

— Օհօ, շատ գաղ է, ճամբար ընկնելու  
ժամանակ է, խօսեց Արտէմն ու զլուխը դրո-  
նից դուրս հանեց տեսնելու՝ թէ արդեօք արել  
շատ է բարձրացել:  
Այդ զիշեր խեղճ երեցկինը շատ էր տան-

չուել. համարեա թէ նա աչքը չէր փակել:  
իր փորձառութեան շնորհիւ համարեա դու-  
շակում էր գալիք օրերի հոգսերն ու օրբատ-  
օրէ մեծացող ժախսերը:

Բայց ամենքից հետաքրքիրն այն է՝ որ նա  
այդ գիշեր ոչ ոքի վրայ այնպէս չէր բարկա-  
նում, ինչպէս իր վրայ: Նա ոչ մի կերպ չէր  
կարողանում ներել իրան մի մեծագոյն տնտե-  
սական սխալ՝ որը նրա զիւանազիտական ըն-  
դունակութիւններին ամենակն պատիւ չէր բե-  
րում: Այն է՝ մշակ վարձելիս՝ նա կարող էր  
պայմանագրերով կատարելապէս սարկացնել.  
Եթէ պայմանազիր ունենար՝ մշակներն իւր  
անձեռնմխելի սեփականութիւնը կարող էր  
հաշուել, և նրանցից ոչ մէկը մտքից անդամ չէր  
կարող անցկացնել հեռանալ դործի այսպիսի  
տաք ժամանակ:

Սակայն՝ բանը նրանումն է՝ որ այն ժա-  
մանակ նա բոլորովին այլ տեսակեա ունէր:  
Զեր կարծում՝ որ բերքն այսպէս առատ կը  
լինի, ուստի և չէր ուզում իր ձեռքերը պայ-  
մանագրով կապել, որպէսզի կարողանայ ամեն  
ըսպէ մշակներին դուրս անել՝ եթէ պահեն  
անձեռնառու լինի: Իսկ այժմ, հէնց դրա հա-  
մար է բարկացած ինքն իր վրայ, և կարելի է  
երաշխաւորել, որ այսուհետեւ նա ամեն հան-

գամանք կը գուշակէ. նոյն իսկ բերքի տա-  
րին: Ամբողջ գիշերը նա ինքն իրան նախա-  
տում էր, և միայն առաւտուայ դէմ բոլորո-  
վին չարդուած՝ քնեց: Բայց աւելի լաւ էր չը  
քնելը:

Երազում տեսակ՝ որ իրան բոլորը, բոլորը  
թողել են, և ոչ ոք չի ուզում իր մօտ աշխա-  
տել: Նա աղերսում է, ահազին գումարներ է  
տալիս, բայց իզուր: Իսկ արաւում հասել է խիտ,  
առատ հացը, արեն անզթաբար այրում է,  
հատիկները թափում: Բոլոր այդ հարստու-  
թիւնը իդուր կը կորչի, և կատարելապէս ոչ  
ոք չի ուզում նրան օգնել: «Այդ երեք նրանից  
է որ ես այսպէս չար եմ» մտածում է երեց-  
կին ու հայր Լեվին օգնութեան կահնչում:  
Բայց հայր Լեվը խորը քնի մէջ է: Սակայն՝  
վեր կենալու ժամանակ է, կարծես տրեն ար-  
վելիս գուրս է եկել: Ոչ մի ժամանակ չէ պա-  
տահել՝ որ նա արենից ուշ զարթներ: Հագ-  
նուեց ու դուրս եկաւ բակը նայելու՝ Մար-  
թան հաւերին ու սագերին կուտ տուել է թէ  
ոչ Բակում Արտէմին պատահեց:

— Օհօ, արդէն ուր որ զնում է, երկիւ դով  
մտածեց երեցկինը:

— Գիւղ պէտքէ զնամ, ասաց Արտէմը,  
զլուխը բացած նրան մօտենալով:

— հնչու, հարցրեց Երեցկինը քննող հայեացքով:

— Այնպէս, տանեցոց տեսնեմ, այսօր տօնէ, պատասխանեց Սրտէմը ինքն իրան՝ որ միանդամից ասելն անլարմար է:

Երեցկինն առանց պատասխան տալու դարձաւ – գնաց:

Սրտէմը բակից գուրս եկաւ, բայց ընտանիքին տեսութեան գնալու փոխարէն, ծռուեց ուրիշ կողմ: Տէրտէրի տանից գէպի ծախ զըտնում էր կալուածալիրոջ զրասենեակը:

Սրտէմը մօտեցաւ գործակատարներից մէկին, որի շուրջը խմբուել էին բազմաթիւ մշակներ՝ իրանց մի շաբթուայ աշխատավարձն ստանալու: Բարձր սեղանի մօտ նստած էր այն գործակատարը՝ որ իրան «ստանի ճուտ» էր անուանում: Նա համրիչի վրայ արագութեամբ հաշուած էր ու փողեր բաժանում: Հերթը Սրտէմին հասաւ:

— Դու ի՞նչ ես ուզում, հարցրեց գործակատարը ուաքից մինչև զլուխ Սրտէմին զընելով:

— Ուզում եմ մշակ մտնել, պատասխանեց Սրտէմը:

— Հըմ... մշակ մտնել... ալդ ի՞նչպէս է, որ

եկել ես մշակ մտնելու, քանի որ տէտէրի ծառան ես:

— Թուրս եմ եկել:

— Գիտենք թէ ինչպէս էք դուրս գալիս: Լաւ վարձի հոտ ես առել՝ ու առանց դէս դէն ընկնելու փախել ես: Օ՛, այ թէ ժողովուրդ էք: Մարակը պէտքէ ձեղնից անպակտս լինի: Անցագիրդ բեր տեսնեմ:

«Ստանի ճուտն» ամեն ինչ հասկացել էր: Պէտքէ այստեղ ասել՝ որ նա տէրտէրի ընտանիքի հետ բարեկամական յարաբերութիւնների մէջ էր, և խոստացել էր, որ եթէ նրանց աշխատաւորներից որևէ Տէկը գնայ իր մօտ՝ չընդունէ: Երբ անցագրի մասին խօսք եղաւ, Սրտէմը պատասխանեց, որ անցագիրը գեռ տէրտէրի մօտ է:

— Է՞հ, մենք զանազան թափառական որիկանների առանց անցագրի չենք ընդունում: Այս ասելով՝ գործակատարը դարձաւ հետեւեալ մըշակին՝ Սրտէմին ցոյց տալու համար, որ նրան դեռ գործը վերշացրել է:

Սրտէմը զլուխը կախ դուրս եկաւ, Ճիշտ է՝ նա չը յուսահատուեց, որովհետեւ աշխարհում դեռ շատ ուրիշ սեղեր կային աշխատանք ճարելու: Սակայն ինչ որ լինի՝ նա այն վհուկի մօտ չի դնայ, չի խնդրի, և ընդհակառակը՝ եթէ

նոյնիսկ նա խնդրե՞ւ ինքը ոչ մի կերպ չի համաձայնուի:

— Իսկ ի՞նչ կանեմ եթէ... եթէ ամեն տեղ էլ մերժեն: Ո՞վ զիտէ՛ գուցէ և առանց անցազի տեսնելով՝ բռնեն, բանար կոխեն և այս ոսկի ժամանակը անօգուտ կորչի:

— Պարոն Արտէմ, լսուեց նրա յետեից մի ծանօթ ծայն, երբ գուրս էր զալիս գրասենեակից:

— Օհօ, դժւ ես այդ, Գասպար քեռի, խօսեց Արտէմը, աեսնելով մի բարձրահասակ, տօնալին հագուստով զուգոււած զիւղացու:

Գասպար քեռին արդէն քառասունից անց՝ կէս սպիտակած մի զիւղացի էր, Մարթացի հայրն էր, և ամբողջ զիւղում յայտնի էր որպէս ահազին ոլժի տէր, և նոյնքան ես չքաւոր ծարդ: Վերջին հանդամանքը նրանով էր հաստատում, որ Գասպար քեռին թուլութիւն ունէր դէպի խմիչքը: Այդ պատճառով՝ Արտէմի զարմանքը քիչ չէր, երբ այս տօնին նրան բոլորովին չը հարբած տեսաւ:

— Այս ի՞նչ է նշանակում, Գասպար քեռի այսօր...

— Ինչի հարբած չէմ, կտրեց նրա խօսքը Գասպար քեռին:

— Այո՛, այո՛, այդ էի ուզում ասել: Կարծեմ այգակէս քեղ չէ սաղում:

— Հա՛, հա՛, հա՛, նրա համար հարբած չեմ, սիրելիս, որ ժամանակ չունեմ: Այո՛, պարոն Արտէմ, այժմ մկիտան դնալու ժամանակ չէ, աշխատելու ժամանակ է: Ինձ համար ասում են՝ ունեցածս արազի եմ տուել, բայց ի՞նչ ունէի որ արազի տալիք, — այդ ոչ ոք չի հարցնում: Հիմայ՝ տեսնում ես նոր շորեր էլ եմ արել:

Եւ Գասպար քեռին ոլորեց բեղերը:

— Հա՛, լսիր, պարոն Արտէմ, խօմ տեղ չե՞ս որոնում:

— Այո՛:

— Յէ քեղ ինչը. ինչու ես եկել այս սրիկալի ծօտ. ախար սա իսկական շուն է, հոգին ծախել է: Դու չզիտե՞ս, որ սա երեցինոց սոքն ու ծեռը լիզողներից է: Դնանք Կուզմինի զրասենեակը. այնաեղ առանց խօսելու՝ կընպունեն, դեռ կազաչն էլ: Հիմայ ժամանակին այգակէս է. ամենքը որսկան շան պէս դէս -դէն ընկած՝ քաղաքոր են ման զալիս: Ես էլ այնաեղ եմ աշխատում, գնանք միտախն, հինդ վերստ հաղիւ կրլինի: Է՞ն, պարսն Արտէմ, քեղ ծշմարիտան ասեմ, ես ահա քառասուն երկու

տարեկան մարդ էմ, այսպիսի ժամանակ չեմ  
տեսել: Ճիշտ որ՝ Աստուծոյ ողորմութիւնն է:

Սրտէմն՝ առանց տատանուելու քեռի Գաս-  
պարի առաջարկութեանը համաձայնուեց  
Ապա կատարեց Մարթալի յանձնարարու-  
թիւնը:

Հա՛, հա՛, Մարթաս լիմար աղջիկ չէ, ինքնա-  
բաւականութեամբ խօսեց Գասպար քեռին:  
Ի՞նչ գործ ունի տէրտէրի տանը: Վազր նրան  
էլ հետներս տանենք. այնտեղ փոցիս կանէ, լաւ  
աշխատաւոր է հա՛, սատանի պէս փոցիսել  
դիտէ...

Առհասսարակ՝ զժուար չէր նկատել՝ որ Մար-  
թան Գասպար քեռու թոյլ կողմն է. ասենք՝  
այդ հասկանալի է՝ քանի որ միակն էր. մնա-  
ցածները մի ձմեռուայ մէջ բոլորը զիֆտիրի-  
տից մեռել էին:

Սրդէն կէսօրին մօտ էր՝ երբ Սրտէմը կնոշն  
ու երեխաներին այցելելուց յետոյ՝ վերադար-  
ձաւ տէրտէրի տանը:

— Ճաշի ժամանակ է, ասաց Մարթան՝ երբ  
տեսաւ Սրտէմին:

Չէ, ժամանակ չէ, յուզուած պատասխա-  
նեց Սրտէմը: Որտե՞ղ են տէրտէրն ու կինը:

Տէրտէրն ու երեցկինը դահլիճումն էին:  
Երբ Սրտէմը ներս մտաւ՝ երեցկինն իսկոյն

հեռացաւ: Հայր Լեվը վերնազգեստով էր. պէտքէ  
նոխաճաշէր՝ ուստի և անկողնում չէր: Նրա  
առաջ գրած էր արադի շիշն ու մի ամանով  
ծուկ:

— Օ՛, այս գո՞ւ ես, պարոն Արտէմ, բարե-  
կամաբար զիմաւորեց նրան տէրտէրը: Ա՛յ,  
այդպիսի պարզութիւնը ես շատ եմ սիրում.  
Ինքոյ ճաշից առաջ առանց կանչելու՝ եկել ես.  
Եղբայր, մարդը պէտքէ միշտ ի՞նքն իր մասին  
հոգալի: Եթէ դու ամեն օր գալիք՝ միշտ էլ մի  
բաժակով արադ անուշ կանէիր:

Այս խօսքերով՝ հայր Լեվն սկսեց բաժակը  
լցնել, ըստ երեսիթին՝ Արտէմին հիւրասիրե-  
լու համար:

— Սիրալիր Փալփայանքիդ համար շնոր-  
հակալ եմ խորապէս, միայն՝ այժմ ուրիշ գործ  
ունեմ...

— Ի՞նչ գործ:

— Խնդրեմ հաշիւս մաքրէք. պէտքէ ձեր  
մօտից գուրս դամ:

Տէրտէրն ամենևին այդպիսի պատասխան  
չէր սպասում, ուստի և ոչ մի առարկութիւն  
չկարողացաւ անել: Այդ հանգամանքն սախազց  
նրան ամբողջ երկու րոպէ մտածելու՝ որ նրա  
համար մի մեծ հերոսութիւն էր:

— Բայց... լսիր, պարոն Արտէմ... ինչի՞ց  
ես անբառական:

Այս հարցի վրայ՝ Արտէմը հաղիւ նկատելի  
կերպով ժպտաց: Իսկապէս՝ տարօրինակ կը  
լինէր ենթադրել՝ որ աէրտէրն ինքը ալդ հար-  
ցի պատասխանը չգիտէ:

— Ոչինչ... ես ամեն բանից զոհ եմ, մի-  
այն... իհարկէ, ամեն ճարդ իր օգտի մասին  
պէտքէ մտածէ...

— Իհարկէ, ես դրան բան չեմ ասում, հա-  
մաձայնուեց հայր Լեվը, միայն, սիրելիս, որ-  
եւ պատճառ պէտքէ լինի: Լոիր, պարոն Ար-  
տէմ, ուղիղն ասա՛, անկեղծութեամբ, ես՝ որ-  
պէս հոգմոր հովիւ, իսկ դու՝ որպէս որդի,  
հնազանդ որդի...

Վերջին խօսքերի հետ հայր Լեվը ուարի  
կանգնեց, մօտեցաւ Արտէմին, ձւոքը զրեց նրա  
ուսին՝ որպէս մտերմութեան նշան:

— Սակեղծութեամբ խօսենք, շարունակեց  
նա յուղուած: Իհարկէ՝ ես չեմ ասում՝ որ քեզ  
լաւ էինք նայում, այժմ ես էլ եմ տեսնում՝  
որ աճքից բաց ենք թողել... Երեցկինը... ճիշտ  
է, միքիչ կոպիտ է... բայց իսկապէս՝ բարի կին  
է... ինքդ ես տեսնում՝ որ ահապին տունը նա  
է կառավարում, չի կարող ամեն տեղ անձամբ  
լինել: Այժմ ես ինքս կը հետևեմ՝ որ ժառա-

ների մասին լաւ հոդ տանեն: Բայցի ալդ՝ զի-  
ակե՞ս ինչ... Մենք էլ խօմ դազաններ չենք...  
տեսնում ենք՝ որ... իհարկէ՝ ոսձիկդ քիչ է.  
ձմեռը ոչինչ, աշխատանքը թեթև էր, բայց  
հիմայ ուրիշ ժամանակ է: Ես ինքս կաւելաց-  
նեմ ոռնիկդ... բառասունի փոխարէն՝ իննուն  
ոռւրի կը առամ... Տեսնում ես... մենք ձեր  
մասին էլ ենք հոգում...

— Շատ շնորհակալ եմ, տէր-հայր, բայց՝  
ինքրեմ հաշխաներս մաքրէք: Ես ոչ մի կերպ  
չեմ կարող մնալ... Եւ Արտէմը աէրտէրին խորը  
գլուխ առւեց:

Այդ բոպէին գուռը բացուեց և ներս մը-  
տաւ Գասպար քեռին ու հայր Լեվին գլուխ  
առւեց:

— Բարե, Գասպար, ինչու ես եկել:

— Ձեզ մօտ, տէր-հայր, խոնարհաբար պա-  
տասխանեց նա, աղջիկս հարկաւոր է, հաշխ-  
ներս մաքրեցէք:

Այս անդամ հայր Լեվը շփոթուեց: Եւ առ-  
հասարակ՝ սկսուած խաղը նրան արդէն ծան-  
ծրացրել էր. անկողինը բաշում էր, նա բոլո-  
րովին չարգուել ու թուլացել էր աչղքան աշ-  
խատանքից: Ընդահանրապէս՝ հասկանալու  
կողմից շատ էլ հմուտ չէր տէր-հայրը, բայց  
երբ բանը հնարագիտութեան էր գալիս՝ այդ

արդէն ամենաին նրա գործը չէր: Սակայն՝  
մինչդեռ հայր Լեվը այդպիսի անելանելի դրու-  
թեան մէջ էր՝ մի բոլորովին անսպասելի բան  
պատահեց: Հարեւան սենեակի գուռը աղմու-  
կով բացուեց և ներս ընկաւ երեցկինը: Նրա  
կարմրած դէմքից ու այս-այն կողմը պըլշա-  
ցող աչքերից կարելի էր հասկանալ՝ որ վերջին  
ժայր կատաղած է և այս բոպէին փոթորիկ  
կը սկսուի: Դժուար չէր նաև գուշակել՝ որ  
նա ամեն ինչ լսել է:

— Զէ-է... զոռաց նա սոսկալի ձայնով:  
Ալես չեմ կարող... Համբերեցի, երկար համ-  
բերեցի, բայց էլ չեմ կարող... ի՞նչ է... խօսք  
խօսքի՞ էր տուել... ֆող էր ուզում... Աւա-  
զակնե՞ր, սրիկաներ, խաբեբաներ... Զէ, էլ չեմ  
կարող: Հաշի՞ւ էր ուզում... Ոնցազրե՞րդ էր  
ուզում... ի՞նչպէս չէ... Դուրս, դուրս կորեք,  
ի՞նչ էր ցցուել, դուրս եմ ասում: Վերցրեք  
ձեր չուլ ու մուլը, աղքատի փալասները, այս  
բոպէիս կորեք:

Գասպար քեռին ու Արտէմը բարւօք հա-  
մարեցին փասա-փուսա քաշելը, իսկ երեցկինը  
իր օրինակելի հայհոյանքներով հանդիսաւոր  
կերպով նրանց ճանապարհ էր զցում: Հայհո-  
յանքը կւս վերստ հեռու լւում էր: Միքանի  
հետաքրքրուողներ հաւաքուել էին աղմուկին

«թամաշա անելու», ըստ որում, կանակք՝  
որոնց լեզուն առհասարակ քոր է զալիս, կծու-  
նկատողութիւններ էին անում:

Համա թէ հայհոյում է. հա... մեղնից  
էլ լսա...

Այնինչ երեցկինն այս անդամ ինքն իրան  
գերազանցեց: Նա կատարելապէս անիրազործե-  
լի ցանկութիւններ էր յախնում, ինչպէս օրի-  
նակ՝ որ Արտէմն իր ամբողջ ընտանիքով, խըր-  
ճիթով և նոյնիսկ՝ շներով ու հորթերով (որ  
բոլորովին չունէր) գետնի տակն անցնէր: Ըստ  
որում՝ երեցկինը չը զլացաւ միւս աշխարհից  
Արտէմի հօր անմեղ ուրուտականին անհանդստա-  
ցնել և ցանկալ՝ որ դագաղում եօթն անդամ  
շուռ ու մուռ գայ: Ինչ վերաբերում է Գաս-  
պար քեռուն, նրան հրամաւեց բոլոր որգոյով,  
թոռներով ու տանեցիներով երեք անդամ փր-  
թել, հող դառնալ, և այդ բոլորից յետոյ՝ ծա-  
ռից կախուել: Վերջիվերջոյ՝ մեծահոգութեամբ  
ու անմնուրացութեամբ զոհերով իր բոլոր եկա-  
մուտները՝ երեցկինը ցանկութիւն յախնեց,  
ամբողջ զիւղը զետնի տակն անցնի...

Բարեբաղդաբար՝ նրա աղօթքը չը լսուեց:

Հետեւեալ առաւօտ մեր հերոսներն արդէն  
զաշտումն էին: Գասպար քեռու ցոյց տուած  
տեղը անցագիր չը պահանջեցին, որովհետեւ

զրա ժամանակը չեր, և բացի այդ՝ այնտեղի  
գիւղացիները բոլորը նանաչում էին իրանց հա-  
րեան Արտէմին:

Արտէմն ու Գասպարը առաջին շարքում  
վաեմ ու ծանր շարժում էին գերանդիները:

Մարթան «սատանի պէս» փոցիսում էր:  
Վազօրիեան արեն ուրախ նայում էր արե-  
նիքից: Սիրալիր քնըշութեամբ շոյելով անծայր  
հովիար ծածկող մետաքսանման կանաչ խոտը՝  
խաղում էր առաւօտուայ թարմ զեփիւոր:  
Ուրախ երգում էին արտուաները, երվերփում  
ճնճղուկները...

Եւ ձեր հերոսներն անսահման ուրախու-  
թեամբ նայում էին Տիրոջ ստեղծագործու-  
թեանը, Արարչի շնորհին. կարծես երկար տա-  
րիների ծանր, ճնշող գերութիւնից մի ուրախ,  
արեգակնային օր՝ նրանց վերջապէս աղասու-  
թիւն են առել:

ՎԵՐԶ

### ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵՑՈՒՆԻ

Նոր լոյս տեսած զբքուկները.

1. Գործարան թէ երկրագործութիւն. . . . . 15 կ.
2. Սնապաշտութիւն և կախարդութիւն 20 „
3. Մաերմական խորհուրդներ  
պատանիներին . . . . . 20 „
4. Գոյութեան կոիւ . . . . . 20 „
5. Ռուգոլֆ Վիրխով . . . . . 25 „
6. Ակր և խանդ . . . . . 20 „
7. Պոռճկութիւն և անառակութիւն . . . . . 20 „

### ՅՈՎՀԱՆՆԵԼՍ ԱՐԱՄԵՑՈՒՑԻ

վերջին հրատարակութիւնները

1. Ընտրութիւն կաթնատուների. . . . . 15 կ.
2. Ռուգոլֆ Վիրխով . . . . . 25 „

Դիմել հայ գրավաճառանոցները:

ՀՀ Ազգային գրադարան



NL0312855

**ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ**

1. Քարը երգում է . . . . . 10 կ.
2. Ճշմարիտ մեծութիւնը . . . . . 7 „
3. Արդար ժերունին . . . . . 10 „
4. Մեծ տօն . . . . . 10 „
5. Նոր լոյս . . . . . 10 „

**ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.**